Azg Ազգ

27 ՄԱՅԻՍ 2008 ԵՐԵՔՇԱԲԹԻ 100 (3994)

Թուրքիո հայոց պատրիարքը հիվանդ է

Երեկ երեկոյան Թուրքիայի հայոց պատրիարքության կրոնական ընդլայնված ժողովում հաստատվել է պատրիարք Մեսրոպ արք. Մուրադյանի հիվանդ լինելու մասին տեղեկությունը եւ հայտարարվել է նրան ինքնաբերաբար տեղացի բժիշկների եզրակացությունը, թե Ամենապատիվ պատրիարք հայրը կարիք ունի երկարաձգի հանգստի, որի ընթացքում ստանալու է բժշկական անհրաժեշտ դարմանումներ: Այս մասին «Ազգ»-ի հեռախոսային հարցմանն ի պատասխան, Պոլսո «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Քոչը հաղորդեց, որ ժողովի որոշման համաձայն, պատրիարքության ընթացիկ գործերը ժամանակավորապես կատարելու է լուսարարապետ Արամ արք. Աբեջյանը, որը պատրիարքության երիցագույն անդամ Շահան արք. Սվաճյանի հետ համախորհուրդ՝ տնօրինելու է նաեւ ոչ ընթացիկ խնդիրները:

Ինչ վերաբերում է Պատրիարք սրբազանի նախապես առած վարչական կարգադրություններին, դրանք մնալու են անփոփոխ: Այս եւ այլ մանրամասնությունների վերաբերյալ պատրիարքության պաշտոնական զեկույցը կհրապարակվի այսօր:

Շուտափույթ եւ ամբողջական աղաչինում ենք մաղթում Ամենապատիվ պատրիարքին:

Երբ Կիլիկիո կաթողիկոսն է անտեսում կանոնագիրը

Երկու տարի առաջ Թեհրանի հայոց թեմի (ԹՀՀԹ) Պատգամավորական ժողովի (ՊԺ) կողմից, համաձայն Կիլիկիո Կաթողիկոսության կանոնադրության «Ազգային ընդհանուր ժողով» գլխի հոդված 22 ա-ի («Ազգային ընդհանուր ժողովի աշխարհական երեսփոխանները կընտրեն թեմերի ներկայացուցչական ժողովների կողմից չորս տարվա շրջանի համար») թեհրանահայ համայնքից ընտրեցին 10 հոգի՝ որոնցից Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության Ազգային ժողովի պատգամավորներ: Սակայն 2008 թվականի մայիսի 13-ին գումարված ԹՀՀԹ-ի Պատգամավորական ժողովի 49-րդ նիստի օրակարգի հարցերից մեկն էր՝ «Կիլիկիո կաթողիկոսության Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունը»: Ուստի հենց նիստի սկզբից որոշ պատգամավորներ իրենց առարկություններն արտահայտեցին չնախատեսված ընտրությունների անցկացման վերաբերյալ: Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Սեբուհ արք. Սարգսյանը այս կարգադրությամբ ասաց. «Կիլիկիո հայրապետ Առամ Վեհափառը ինձ հեռախոսազրույցի ժամանակ ասել ու կարգադրել է, որ կրկին ընտրություն անցկացնեմ եւ ես էլ պետք է իր հրամանը կատարեմ»: Պատգամավորների միջեւ երկար բանավեճ ընթացավ այս հարցի շուրջ: Ժողովի դիվանի նախագահ դոկտ. Լեւոն Դավթյանը նշեց, որ իր համար Սրբազան հոր եւ Առամ Վեհափառի խոսքն ու կարգադրությունը Կիլիկիո կաթողիկոսության կանոնադրությունից բարձր է եւ գերազանցելի: Պարզվեց, որ այդ սկզբունքն ունեն նաեւ մի շարք կուսակցականներ: Ժողովրդավար եւ անկախ պատգամավորները հարց բարձրացրին, որ եթե կանոնադրությունը խախտվի, իրենք չեն մասնակցի այս ընտրությանը, որի պարագայում ժողովը իվորումից կզրկվի: Վերջապես դոկտ. Լեւոն Դավթյանի եւ Սրբազան հոր առանձին խորհրդակցությունից հետո հայտարարվեց, որ նիստը ավարտված է եւ օրակարգի այս հարցը հետաձգվում է հաջորդ նիստին, հույս ունենալով, որ կմտածեն այս կարգակցությամբ եւ անհրաժեշտության դեպքում կաշխատեն բոլոր պատգամավոր կուսակցականներին ու համակիրներին խրախուսել մասնակցելու հաջորդ նիստին, որպեսզի ժողովն ապահովվի իվորումով եւ այդ ոչ օրինական ընտրությունը անցկացնեն:

Ի վերջո բոլորին հայտնի դարձավ, որ Սրբազան հայրը եւ Առամ Վեհափառն ամեն կերպ աշխատում են թեկուզ կանոնադրությունը խախտելով, որպեսզի իրավունք չտան իրանահայ հայտնի ազգային գործիչ, բարերար, «Հույս» երկաբաթաթերթի արտոնատեր, Իրան-Հայաստան տնտեսական պալատի նախագահ եւ վերջերս կյանքի կոչված Իրան-Հայաստան բարեկամության ընկերության հիմնադիրների խորհրդի նախագահ պրն. Լեւոն Ահարոնյանին եւ մի քանի անկախ պատգամավորների, որոնք երկու տարի առաջ են ընտրվել, մեկնել Անթիլիաս որպես Կիլիկիո կաթողիկոսության Ազգային ժողովի մեր համայնքի պատգամավորներ: Հարկ է նշել, որ պրն. Լ. Ահարոնյանի այցին կաթողիկոսի դեմ լինելը գալիս է նրա բաց նամակից, որը ժամանակին հասցեագրել էր Առամ Ա կաթողիկոսին եւ որտեղ մտահոգություն էր հայտնված իրանահայ համայնքում հոգեւորական դպրոցի եւ հոգեւոր ասպարեզում իրանահայերի բացակայության հարցերին*:

Դոկտ. ՌՈՒԲԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ,
ԹՀՀԹ-ի Պատգամավորական
ժողովի անդամ
Թեհրան

(*) «Ազգը» ժամանակին հրատարակել է այդ խիստ կարեւոր նամակը:-խմբ.:

ԱՅԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

12 հանձնաժողո՞վն է բարձրացնելու ԱԺ հեղինակությունը



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ,

Երբ անցած շաբաթ Ազգային ժողովում լուր առանք, թե այս շաբաթ արտահերթ նիստում ԱԺ կանոնակարգ-օրենքի փոփոխություններ են նախաձեռնվել, որ ընդլայնվելու են խորհրդարանական ընդդիմության լիազորությունները, մտքներովս չէր անցնի, որ պատգամավորական այդ նախաձեռնությունն ուղղակի կոալիցիայի ներքին խնդիրներն է լուծում. երեկ ԱԺ արտահերթ նիստում առաջին եւ երկրորդ ընթերցմամբ ընդունվեցին կանոնակարգի նոր փոփոխությունները, որոնցով նախատեսված 12 հանձնաժողովներից հենց 12-ն էլ կկազմավորվեն, այսինքն՝ եւս 3 ԱԺ մշտական հանձնաժողովներ են ստեղծվում, որից երկուսի ղեկավարությունն, ըստ որոշ տեղեկությունների, հանձնվելու է ՕԵԿ-ին՝ ընդլայնված կոալիցիայի հավակնությունների բավարարմանը ծառայելով: Երեկվա դրությամբ՝ միայն մեկը կոալիցիայում մտադիր էին առաջարկել «ժառանգությանը»: 12-ից հենց այդ մեկը, երեւում է, պետք է հավասարակշռեր ընդդիմություն-մեծամասնություն հարաբերությունները: Սակայն էլի մեր տեղեկությունների համաձայն՝ այդ մեկից եւս խորհրդարանական ընդդիմությունը հրաժարվում է. իրենք էլ Բաֆֆի Հովհաննիսյանի առավելապատասխան առաջարկների փաթեթն ունեն ու այս նվազագույնի համար չեն պայքարում, եւ առհասարակ՝ որեւէ պայքարության չեն մասնակցում:

Տես էջ 3

Հայաստանի Գերմանիայից. Ներդրումային հնարավորությունները Հայաստանում

Կառլսրուհեի առեւտրաարդյունաբերական պալատը մայիսի 27-ին, ժամը 14-16.30-ին հրավիրում է գործարարներին՝ հայաստանյան ընկալում ներդրումների հնարավորության հանգամանքից ծանոթության: Բադեն-Բադենի Բիրոն պալատում այսօր կայանալիք «Գործարար եւ ներդրումային հնարավորությունները Հայաստանում» վերնագրյալ միջոցառմանն իր փորձառության մասին կխոսի Հայաստանի մասնավոր հատվածում ամենամեծ ներդնողն ու աշխատատեր արտահայտողը՝ CRONIMET-ը:

Ժամը 14.00-ին ողջույնի խոսքով միջոցառումը կբացեն Բադեն-Վյուրթեմբերգի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Բերնդ Բեխթոլդը եւ Բադեն-Վյուրթեմբերգում ՀՀ պատվո հյուպատոս, Կառլսրուհեի CRONIMET խմբի կառավարիչ Գյունթեր Պիլարսկին: 14.15-ին «Օտարերկրյա ներդնողների համար ներդրումային մթնոլորտը Հայաստանում» զեկույցով հանդես կգա Բեռլինում ՀՀ դեսպան Կարինե Դազինյանը, 14.25-ին «Գործարար եւ ներդրումային հնարավորություններ Հայաստանում» ելույթով՝ Կառլսրուհեում Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի գլխավոր կառավարիչ Գագիկ Վարդանյանը:

14.50-ին «Տեխնոլոգիաների երջանկությունը. գործընկեր Հայաստանի համար» վերնագրյալ նյութը կներկայացնի Գերմանիայում Կառլսրուհեի առեւտրաարդյունաբերական պալատի Հայաստանի ներկայացուցչության նախագահ Ռոբերտ Վ. Հուբերը:

Ընդմիջումից հետո՝ ժամը 15.15-ին CRONIMET խմբի Հայաստանում ծավալած գործունեության մասին կզեկուցի այդ հատվածի առեւտրային տնօրեն Միշայել Ֆոգելը: Ժամը 15.45-ին ներկայացվող եզրափակիչ ելույթը՝ «Ներդրումների խրախուսումը Հայաստանում» վերադրված է ԵՄ խորհրդատվական կառուցվածքային հիմնադրամի ներկայացուցիչներ Անդրեաս Ջավելկաուսկին ու Մանֆրեդ Շոյլկեին:

ԱՆԱՀՏ ՀՈՎՀԱՆԵՍՅԱՆ
Գերմանիա

Հաշվեհարդար ոստիկանի նկատմամբ

Ըստ Lragir.am-ի, Նոր Նորքի բաժնի ոստիկան Դավիթ Ղազարյանի նկատմամբ բռնություն կատարելու առիթով քրեական գործ է հարուցվել: Հաղորդվում է, որ վերջինս իր անձնական ՎԱԶ-08-ով Մյասնիկյան պողոտայում, վազանց կատարելու պահին թեթեւակի բախվել է «Մերսեդես C» մեքենայի, որից հետո նշված մեքենայի վարորդն իր ընկերների հետ ծեծի է ենթարկել նրան: Դավիթ Ղազարյանը հայտարարել է, որ ծեծողների մեջ ճանաչել է Գառնիկ Մուրադյանին, ում ինքը ժամանակին բերման էր ենթարկել զենք եւ զինամթերք պահելու մեղադրանքով: Հաղորդվում է, որ ոստիկանությունը միջոցներ է ձեռնարկում Մուրադյանին բերման ենթարկելու համար: Այս իրադարձությունը դարձել է ինտերնետային շատ կայքերի քննարկման թեմա, որոշ «բլոգեր» պնդում են, որ Գ. Մուրադյանը Գագիկ Ծառուկյանի փեսան է:

Մեր կողմից ավելացնենք, որ ցիտերով եւ մերսեդեսներով խաղում սլացողները չեն խորհում հարձակվել բոլոր նրանց վրա, ովքեր «թարս» կնայեն կամ թեթեւակի կերեսեն նրանց թանկարժեք մեքենաները, սակայն որոշ կանոն նմանաբիր խուլիգանությունները անպարտելի են մնում, ինչը հարուցում է բնակչության բնական դժգոհությունը: Կարծում ենք՝ ժամանակն է, որ իշխանությունները պատասխանեն, թե մինչեւ երբ է շարունակվելու «հասարակ մարդկանց»-ի պահվածքը Հայաստանում:

Արամ Կարապետյանը ազատության մեջ

Գլխավոր դատախազի մամուլի ծառայությունից հաղորդում են, որ Աղվան Հովսեփյանի ցուցումով փոխվել է Արամ Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը՝ չհեռանալու ստորագրությունը խափանման միջոցով, հաշվի առնելով վերջինիս առողջական վիճակը: Արամ Կարապետյանը միջնորդություն էր ներկայացրել գլխավոր դատախազին՝ խնդրելով փոխել իր նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը, որպեսզի կարողանա շարունակել բժշկական հետազոտություններն ու տանա անհրաժեշտ բուժումներ, միաժամանակ պարտավորվելով լքաքնվել քննությունից: Հիշեցնենք, որ Ա. Կարապետյանը 2008-ի մայիսի լույս 16-ի գիշերը տեղափոխվել է Երեւանի «Երեբունի» բժշկական կենտրոն, ախտորոշվել է սրտի իշեմիկ հիվանդություն:

ՆԳ նախարար է նշանակվելու մարզպետ Ալիկ Սարգսյանը

Ըստ «Ազգի»-ի հասած լուրերի, ՀՀ ոստիկանությունը կվերանվանվի Ներքին գործերի նախարարություն, ինչպես էր 83 տարի շարունակ: ՀՀ ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-գնդապետ Հայկ Հարությունյանը կնշանակվի ՀՀ նախագահի խորհրդական, իսկ ՆԳՆ-ի ղեկավար կնշանակվի Արարատի մարզպետ Ալիկ Սարգսյանը, որը ժամանակին աշխատել է ՆԳ համակարգում, եղել է ոստիկանության ռազմիկոսի պետ: ՆԳ նախարարության համակարգում կստեղծվի նոր մարմին՝ դեպարտամենտ, կլինեն նոր նշանակումներ: Իսկ Արարատի մարզպետի թափուր տեղի համար ընթանում են բանակցություններ: Հիշեցնենք, որ այդ պաշտոնը պատկանում է Հանրապետական կուսակցությանը:

Ս. Մ.

Տոն, որ նվիրում է Գագիկ Ծառուկյանը

Մայիսի 24-ին Աբովյանում տոն էր: Տոն, որ արդեն 9-րդ տարին հաղորդ նվիրում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ, ԱԺ պատգամավոր Գագիկ Ծառուկյանը: Այս տարի եւս Աբովյան քաղաքի շրջանավարտները վստահ էին, որ իրենց քաղաքի պատվավոր քաղաքացին ու սիրելի պատգամավորը վերջին զանգի նվիրական օրը լինելու է իրենց հետ ու անմոռանալի օր է նվիրելու: Որովհետեւ բոլորը գիտեն՝ Գագիկ Ծառուկյանի խոսքը գործ է, եւ շրջանավարտներին գեղեցիկ ու հիշարժան տոն նվիրելու ավանդույթը՝ շարունակական: Դեռ մինչեւ վերջին զանգի օրը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահի կողմից Աբովյան քաղաքի բոլոր 901 շրջանավարտներն արդեն ստացել էին գումար՝ վերջին զանգի նախատոնակության համար, որպեսզի իրենց կյանքի այդ անմոռանալի օրը ոչ մի բանի կարիք չզգան եւ անհոգ հրաժեշտ տան սիրելի դպրոցին:

Եվ ահա մայիսի 24-ին Աբովյանի քաղաքապետարանին հարող հրապարակում հավաքված Աբովյանի եւ հարակից որոշ համայնքների շրջանավարտները, նրանց ծնողներն ու ուսուցիչները, բոլորը մեկտեղվել էին՝ միասին նշելու վերջին զանգը: Ներկաների ուրախությունն ու հուզմունքը կրկնապատկվեցին, երբ շրջանավարտներին շնորհավորելու, նրանց համար կարտասանելու այդ օրը նրանց հետ անցկացնելու եկավ ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը:

Տես էջ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍԿՈՒՍԻՑ

Իշխանությունները պետք է ձերբազատվեն նախկին սխալներից

«Համոզված ենք՝ միայն նախորդի սխալներից ձերբազատվելու պատրաստակամությամբ տոգորված իշխանությունները կարող են երկրի զարգացման նոր ուղենիշներ նախանշող համալիր քայլեր մշակել ու իրականացնել, որոնց շնորհիվ հնարավոր է հաղթահարել կանխատեսելի վտանգավոր հետեւանքներով հղի իրավիճակը», նշվում է Հայաստանի ղեմոկրատական կուսակցության հանրապետական խորհրդի երեկվա տարածած հայտարարության մեջ: Պատրաստակամություն հայտնելով երկիրն անվտանգ զարգացման մայրուղի դուրս բերելու գործին նպաստելու՝ կուսակցությունն ընդգծում է նախկինի եւ ներկայի միջեւ բացահայտ ջրբաժան դնելու կարեւորությունը: Դեմոկրատի հայտարարության մեջ նշվում են ներկա ճգնաժամի պատճառները, դրանց հաղթահարման համար անհրաժեշտ քայլերը, առա ընդգծվում, թե նախընտրական եւ հետընտրական զարգացումներն ինչ գործողություններ են թելադրում:

«Հարկավոր է իրավական ապացույցներով բացահայտել եւ իրավաքաղաքական գնահատական տալ իրական մեղավորներին՝ ինչպես անկարգություններ կազմակերպողներին, հրահրողներին եւ դրանց անմիջական մասնակիցներին, այնպես էլ բարձրաստիճան այն չինովնիկներին, որոնց պատասխանությունն էր թույլ չտալ անառարություն, կեղծիքներ ու կողմնակալություն, կանխարգելել վտանգավոր զարգացումները», ասվում է կուսակցության հայտարարության մեջ:

Ա. Ա.

Դիմումները ավելացել են, կրկնակի դիմումները՝ կտրուկ նվազել

Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար **Գրիգոր Մելքումյանը** երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսում անդրադարձավ քաղաքապետարանին հասցեագրված դիմումների քանակին եւ դրանց սպասարկմանը: Գրիգոր Մելքումյանը նշեց, որ շնորհիվ Երեւանի քաղաքապետարանում 2007-ին ներդրված «Մեկ պատուհան» համակարգի եւ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Էլփաս» ավտոմատացված համակարգի, ապավելացել են քաղաքացիների դիմումները, կտրուկ նվազել են նույն հարցի վերաբերյալ կրկնակի դիմումները եւ բարձրացել են դրանց քննարկման որակն ու արդյունավետությունը:

Մասնավորապես, եթե 2006-ին դիմումների քանակը կազմել է 25 հազար, ապա 2007-ին՝ 57 հազար, իսկ 2008-ի առաջին 4 ամիսներին՝ 28 հազար: Դիմումների գերակշիռ մասը վերաբերում է կոմունալ կենցաղային ոլորտին, ապա գույքային, քաղաքաշինական խնդիրներին, այնուհետեւ սոցիալական, առողջապահական եւ այլ հարցերին: Այս տարի եղել է ընդամենը 51 կրկնակի դիմում:

Գրիգոր Մելքումյանը նաեւ նշեց, որ ավելացել է քաղաքապետարանի մեկ աշխատողի միջին ծանրաբեռնվածությունը, երբ աշխատակազմը մնացել է նույնը՝ 280-ի սահմաններում:

Ա. Ա.

«Մեր հավաքական ուժի մեջ է մեր հաջողությունը»

Մայիսյան հերոսամարտերի 90-ամյակ

Կիրակի օրը Աղարանում տեղի ունեցած մեծ տոնախմբությամբ մեկնարկեց մայիսյան հերոսամարտերի՝ Բաբ-Աղարանի, Ղարաքիլիսայի եւ Սարդարապատի ճակատամարտերում մեր տարած հաղթանակների 90-ամյակին նվիրված միջոցառումների շարը: Փոխվարչապետ **Արմեն Գետոյանը** լրագրողներին տեղեկացրեց, որ մայիսյան հերոսամարտերին նվիրված պետական միջոցառումների ծրագիրը հաստատվել է դեռեւս Սերժ Սարգսյանի վարչապետության օրոք: Մայիսյան հերոսամարտերի առիթով նախանշված միջոցառումները կառավարական հանձնաժողովի հետ համատեղ կազմակերպել էր «Նիգ-Աղարան» հայրենակցական միությունը:

Աղարանը ողողված էր տոնական տրամադրությամբ: Վաղ առավոտից քաղաքում հավաքված ժողովրդին միացավ նաեւ Երեւանից եկած պատանիների եւ հյուրերի մեծ խումբը, ու Բաբ-Աղարանի հերոսամարտի 90-ամյա տարեդարձը նշվեց բավական ուրախ մթնոլորտում: Միջոցառման մասնակիցները հարգի հրապարակից բարձրացան դեպի հերոսամարտի հուշահամալիր, ծաղկեպսակներ եւ ծաղիկներ դրեցին, խոնարհվեցին ի հիշատակ հերոսամարտի զոհերի, ապա իջան ներքեւ, որտեղ Բաբ-Աղարանի ճակատամարտի պատմական նշանակության մասին խոսեցին ասացին պատգամավորները, նախարարները, գլխավոր դասախոսը: Հուշահամալիրի հարակից այգին ամբողջությամբ վերածվել էր ուրախության սեղանների, որի շուրջը խմբված աղարանցիները մի ուրիշ հոգեւորությամբ էին տնում հաղթանակի օրը:

«Մեծ բազմություն էր գալիս, որոնց ոչ մեկը չէր պատահել կամ հուզուել, որ գալիս: Ժողովուրդն ինքնաբուխ, գիտի, որ այսօր նշվում է այս տոնը, եւ փաստորեն այդ բազմությունը խորհրդանշում է այն համախմբվածությունը, որ եղել է 1918-ին, եւ այդ համախմբվածության շնորհիվ հայ ժողովուրդը տարել է այս հաղթանակները: Այդ հաղթանակների շնորհիվ ենք այսօր փորձում մեր երջանիկ ներկան եւ աղագան կերտել», ասաց Արմեն Գետոյանը:

«Մեր մեծամեծները, ամփոփելով պատմական իրադարձությունները, տեսել են, որ մեր հավաքական ուժի մեջ են մեր հաջողությունը, մեր հաղթանակները, իրականում այդպես էլ կա: Բաբ-Աղարանի ճակատամարտում մինչեւ ատամները զինված, վարժված թուրք զինվորների դեմ հաղթանակ տարավ աշխարհազորայինը: Սա հենց վկայություն էր, որ միասնությունը հաղթեց, եւ մենք պիտի հասկանանք, որ յուրաքանչյուրիս գործն է, որ ստեղծում է ազգային ընդհանրական կերպար: Եվս մեկ անգամ ուզում են տեսել Բաբ-Աղարանի ճակատամարտի պատմական նշանակությունը ոչ միայն այն առումով, որ մենք միասնական ճակատով հաղթանակ տարանք թուրք ասկյարի դեմ, այլեւ որ եւս մեկ անգամ եկանք այն գաղափարին, եկանք այն հասատ համոզմանը, որ միասնության մեջ է մեր ազգի գոյատեւման միակ երաշխիքը», նշեց գլխավոր դասախոս, «Նիգ-Աղարան» հայրենակցական միության պատվավոր նախագահ Աղվան Հովսեփյանը:

Երգն ու ուրախությունը քաղաքում շարունակվեցին մինչեւ ուշ երեկո: Մայիսի 27-ին Լոռու մարզում կկայանա Ղարաքիլիսայի ճակատամարտին նվիրված տոնախմբություն, իսկ մայիսի 28-ին միջոցառումների շարը կավարտվի Սարդարապատում:

ԳԱՌԵՂԻՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ նախագահի 2007-ի մրցանակները շնորհվեցին

Երկ գիտական ու երաժիշտ դառնալու երազանք ունի դպրոցականը...

ՀՀ նախագահի նախորդ տարվա մրցանակները 26 անձանց 13 անվանակարգերում շնորհվեցին երեկ՝ նախագահի նստավայրում տեղի ունեցած արարողության ժամանակ: Պրոֆեսոր **Յուրի Բարսեղովը** «Դաշտի գեղաստղանությունը. Թոմաիայի պատափանաստվությունը եւ միջազգային հանրության պարտավորությունները» երկհատորյակի եւ ֆրանսիացի պատմաբան **Իվ Տերնոնը** Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նեղդոած նեանակալի գիտական ավանդի համար նույնանուն անվանակարգում արժանացան նախագահի մրցանակի: Ի դեմ, 10 հազար ԱՄՆ դոլար մրցանակը Բարսեղովը հանձնեցրել է «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների երեխաներին եւ հաշմանդամներին աջակցելու ֆոնդ ստեղծելու նպատակով: Հաջորդ՝ «Բնական գիտություններ» անվանակարգում մրցանակներ շնորհվեցին «Օդերկայնոս ոչ գծային նոր բյուրեղների սաղացումը եւ հետազոտումը» գիտական հոդվածների շարի եւ **«Հանակարգչային կենսաբանության. Էրիթրոցիտի բաղանթի մոդելավորումը եւ ուսումնասիրությունը հանակարգչային փորձի եւ մոդելավորման դինամիկայի մեթոդով»** գիտական աշխատության համար: «Ֆիզիկա» անվանակարգում ՀՀ նախագահի մրցանակին արժանացավ **«Կիսահաղորդչային նանոկառուցվածքների էլեկտրոնային եւ օպտիկական հատկությունների տեսական ուսումնասիրություն»** հոդվածների շարը: «Բժշկագիտություն» անվանակարգում մրցանակ հանձնվեց պրոֆեսոր **Գեորգի Օկրեսի** գլխավորած խմբին՝ Հայաստանում արտամարմնային բեղմնավորման մեթոդի ներդրման եւ իրականացման համար, ինչի շնորհիվ լույս աշխարհ է եկել 89 երեխա:

«Տեխնիկական գիտություններ» անվանակարգում մրցանակ չշնորհվեց՝ արժանի գործ չէր եղել: «Հումանիտար գիտություններ» անվանակարգում «Արաբական երկրների պատմությունն (7-ոդ դարից մինչեւ 2005 թ.)» հատորների աշխատության համար նախագահի մրցանակ շնորհվեց պրոֆեսոր **Նիկոլայ Հովհաննիսյանին,** որը երախտագիտության խոսքում ընդգծեց, որ այդ աշխատության համար մրցանակի արժանանալը կարեւորում է հայկական այն պատճառով, որ հնարավորություն ունի կրկին ուշադրություն հրավիրելու Հայաստանի արտաքին քաղաքականությունում Արեւելքին՝ մարդկային եւ ֆինանսական հսկայական ռեսուրսներ ամբարող տարածաշրջանին առավել ուշադրություն ուղղելու խնդրին:

«Կիլիկիա» առագաստանավով կատարված նավարկության մասնակիցներին՝ «ԱՅԱՍ» նոավային հետազոտությունների ակումբի նախագահ եւ «Կիլիկիա» առագաստանավի նավապետ **Կարեն Բալաբանին** «Մարդասիրական արժեքների տարածմանն ուղղված գործունեություն եւ բազմաբնույթ» անվանակարգում «Նավարկություն 7 ծովերով» ծրագրի իրագործման եւ հրապարակախոս **Զորի Բալայանին** «Գրականություն» անվանակարգում՝ «Կիլիկիա» եռագրության համար մրցանակներ հանձնվեցին:

ՀՀ վաստակավոր նկարիչ **Արամազդ Կարապետյան-Շիրազին** «Կանչեր հոգեւոր» 7 քանդակների համար «Արվեստ» անվանակարգում ՀՀ նախագահի մրցանակ հանձնվեց:

ՀՀ նախագահի երիտասարդական մրցանակները շնորհվեցին «Կերպարվեստ եւ կինո» անվանակարգում՝ «Աբեխ» նորաձեւության կենտրոնի դիզայներ **Լիլիթ Քանֆարյանին** «Հայկական վերածնունդ» հագուստի հավաքածուի համար, **Նարեկ Արզումանյանին՝** «Կերպարներ» գեղանկարների շարի, **Նարինե Մանուչարյանին՝** «Քաղաք» գրաֆիկական աշխատանքների շարի համար: «Գրականություն» անվանակարգում մրցանակակիր **Ռուզաննա Ոսկանյանն** է, «Թափանցիկ անձրեւներ» բանաստեղծությունների ժողովածուի համար: Դատնակահար **Լիլիթ Գրիգորյանին** «Գործիքային կատարում», **Ասատուր Բալջյանին** «Երգեցողություն» անվանակարգում մրցանակներ շնորհվեցին:

«Հայաստան» համահայկական հիմնադրամն իրականացնում է ՀՀ նախագահի մրցանակների շնորհումը 2001 թվականից՝ «Պողոսյան» հիմնադրամի ֆինանսավորմամբ: Հենց նրանց էլ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց եւ ասաց. «Անհամբեր սպասում ենք Հայաստանում Պողոսյան հիմնադրամի նորանոր հաջողություններին, մասնավորապես եւ հատկապես մոտ ժամանակներս նախագահի նստավայրի դիմաց գտնվող եւ երեւանցիների շատ սիրած պուրակի վերաբացմանը»:

Հանրապետության օրվա առթիվ ներկաներին շնորհավորեց ՀՀ նախագահն ու ասաց. «Համոզված եմ, որ հայկական պետությունն ունի հայ մտավորականը պահպանելու եւ զարգացնելու հատուկ առաքելություն: Այդ կարեւոր առաքելությունն արդյունավետ իրականացնելու ճանապարհին մենք լուրջ անելիքներ ունենք: Հայաստանի տնտեսական զարգացմանը եւ միջազգային հեղինակության բարձրացմանը զուգընթաց մեզ անհրաժեշտ է գիտական եւ հոգեւոր, մշակութային զարթոնք: Մեր երկրում բարոյական մթնոլորտի եւ հասարակական իդեալների ձեւավորման մեջ դրա մեծ դեր ունեք, մտավորականի դերի եւ կերպարի արժեւորումը, վստահ եմ՝ հրաշալի է մեզանում: Եթե մի երկրում դպրոցականները երազում են ոչ միայն իրավաբան ու բիզնեսմեն դառնալ, այլեւ գիտական ու երաժիշտ, համոզված եմ, որ նման երկրի գործերը բնականոն ընթացք կունենան: Դրա համար նոր սերնդին պետք են օրինակելի գործեր եւ մարդիկ, այսօր այդ օրինակը դրվեց»:

Ն. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մեջ է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս՝ 374 10 562663
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՀԱՎԵՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅԿԱԶՈՒՆԻ / հեռ. 529221
Հասցեագրատիրոջ (գրասենյակ) / հեռ. 582960
Լուսանկարների մեծաչափ / հեռ. 581841
Համակարգչային ծառայություն / հեռ. 582483
Շտաբային լրահոսի ծառայություն / հեռ. 529353
Համակարգչային շարվածքը «ԱԶԳ» թերթի
Թերթի նիւթերի անթոյլատրելի է մասնակի առանձնությունները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրաւոր համաձայնության խախտելու արգելում են հանձնաժողովի հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Ն տարով յուրաքանչիւր գրվածքները գրվագրային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Առաջին ֆինանսաբանկային կոնֆերանսը Հայաստանում

Լուրջ նախադրյալներ ֆինանսական կենտրոն ստեղծելու համար

Հայաստանի բանկերի միությունը մայիսի 24-ին Դիլիջանի «Լեռնային Հայաստան» հանգստյան տան սրահում անցկացրեց առաջին ֆինանսաբանկային կոնֆերանսը, որին մասնակցեցին ՀՀ նախագահը, վարչապետը, Կենտրոնական բանկի եւ ֆինանսաբանկային համակարգում գործող կազմակերպությունների ղեկավարները:

Կոնֆերանսի նպատակը ֆինանսաբանկային համակարգի առաջիկա զարգացման հիմնական ուղղությունների հասկեցումն է, ինչպես նաեւ համակարգի դերը ՀՀ ընդհանուր զարգացման մոտեցումներում եւ ծրագրերում:

Ֆինանսական կենտրոնը ֆինանսական ինստիտուտների հանգույց է, որն առավելագույնս ընդգրկված է միջազգային ֆինանսական հոսքերի ուղղության եւ կապիտալի կառավարման գործընթացում՝ միավորելով մի շարք միջազգային տուկաներ:

Նախագահ Սերժ Սարգսյանն իր խոսքում նշեց, որ Հայաստանի ֆինանսական համակարգը տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դառնալու իրական ներուժ ունի: Ըստ նախագահի մասնաշնչած գործելաոճի, պետք է աշխատանքներ տարվեն առավելությունների ավելացման ուղղությամբ, ինչպես նաեւ ակտիվություն՝ աշխարհում առկա յուրաքանչյուր նորը Հայաստան բերելու համար:

«Մենք բերելու ենք փորձ, առիթական մեթոդներ, ձեւավորելու ենք ֆինանսական տուկաներում գործունեության կայուն ավանդույթներ: Այս առումով ես դրական եմ համարում Ստոկհոլմի բորսայի մուտքը Հայաստան, եւ այս ազդեցիկ խաղերը մենք պետք է շարունակենք: Այստեղ մեր ֆինանսաբանկային զարգացման տեմպերը գնահատելու համար ես համապատասխան պատասխանատուներից պահանջելու եմ ոչ թե մեր ցուցանիշների համեմատությունները տարածաշրջանային երկրների հետ, այլ ամեն անգամ պահանջելու եմ փաստեր, թե որքանով է մեր համակարգը տվյալ ժամանակահատվածում մոտեցել աշխարհի առաջատարների չափանիշներին», ասում է ՀՀ նախագահը:

Սերժ Սարգսյանը կարեւոր համարեց առաջանցիկ զարգացող ֆինանսաբանկային համակարգը եւ նշեց, որ այն կարող է լոկոմոտիվի դեր կատարել տնտեսության բոլոր հատվածների եւ բնակչության խնդիրների լուծման համար: Ֆինանսաբանկային կարեւորություններից մեկն էլ, ըստ ՀՀ նախագահի, տնտեսական գործընթացները եւ ընդհանրապես հասարակական հարաբերություններում վստահության վրա հիմնված գործելու մշակույթի արմատավորումն է:

Իր զարգացման ճանապարհին Հայաստանի ֆինանսական հատվածը մեկ ուրիշ խնդիր էլ ունի լուծելու եւ պետք է դառնա տարածքների համալսի զարգացման լուրջ գործոն: Նախագահի կարծիքով, հնարավոր չէ լուրջ արդյունքների հասնել, եթե տնտեսական աճը չզգան բոլոր խաղացողները:

Վարչապետ Տիգրան Սարգսյանն անդրադարձավ այն հարցին, թե ինչպես է Հայաստանը դառնալու ֆինանսական կենտրոն: Ըստ վարչապետի, աշխատանքներ պետք է իրականացվեն 6 ուղղություններով, որոնք իրենց հերթին պետք է բացահայտեն Հայաստանի հարաբերական առավելությունները: Միջազգային փորձը թելադրում է, թե որտեղ են այդ առավելությունները:

Առաջինը՝ գործառնական ծառայությունների մատուցումն է, որը նշանակում է վերջնահաշվարկների ծառայության կատարում, ինչպես նաեւ լիզինգ ծառայություն: Որոշակի համեմատական առավելության պայմաններում նշված ֆինանսական հասկացությունները կարող են տեղակայել որոշ գործառնական ֆունկցիաներ ՀՀ տարածքում՝ ֆիզիկապես իրականացնելով վերջնահաշվարկ: Նախապայմանները թե՛ վերջնահաշվարկի եւ թե՛ լիզինգի ծառայությունների համար զարգացած, արդի ենթակառուցվածքի առկայությունն են: Երկրորդը՝ արագ կապի առկայությունն է՝ ինտերնետ, հեռախոսակապ եւ այլն: Երրորդը՝ համապատասխան իրավական դաշտ, որը նաեւ կապահովի տվյալների գաղտնիությունը եւ չորրորդը՝ փողերի լվացման, ահաբեկչության դեմ պայքարի միջոցների համալիր ծրագրի ներդրումը:

Վարչապետը նշեց նաեւ, որ Հայաստանում առկա են մի շարք առավելություններ տարածաշրջանի երկրների համեմատ: Առաջինը որակախոս, անգլիագետ, գրագետ եւ համեմատաբար ավելի էժան աշխատուժն է: Երկրորդն իրական ժամանակահատվածում գործող վճարահաշվարկային համակարգն է: Երրորդը՝ ֆինանսական կենտրոն դառնալու պատրաստակամությունն է, ինչը ենթադրում է անհրաժեշտ ռեֆորմների իրականացման համար քաղաքական կամք, նաեւ դրանից բխող իրավական դաշտի ձեւավորումը:

Ուղղություններից մեկն էլ տարածաշրջանի երկրների կազմակերպությունների թողարկած պարտոնագրերի եւ արժեթղթերի պահառուական ծառայությունների մատուցումն է: Եվ վերջին ուղղությունը ներդրումային ֆոնդերի եւ ակտիվների կառավարիչների ստեղծումն է: Տվյալ ոլորտը նույնպես զարգացած չէ Հայաստանում:

Ֆինանսաբանկային կոնֆերանսի ընթացքում տեղի ունեցան ֆինանսական կենտրոնների միջազգային փորձի վերլուծությանը նվիրված տեսացուցադրումը եւ Հայաստանի բանկերի միության մեկնարկած «Բանկային գործառնական վարվելակերպի կանոնագրքի» ընդունումը:

Վերջում ՀՀ նախագահը, վարչապետը եւ ՀՀ ԿԲ նախագահի տեղակալը այցելեցին Հայաստանի ֆոնդային բորսայի եւ Կենտրոնական բանկի ուսումնական կենտրոնի համար նոր կառուցվող մասնաշենքի:

ՆԱԻՐԻ ՄՈՒՐՈՒԶՅԱՆ

Դիլիջան-Երեւան

Տոն, որ նվիրում է Գագիկ Ծառուկյանը

1-ին էջից

«Սիրելի տասնհոգեորդներ. այսօր հնչեց ձեր վերջին զանգը: Հարգաս դպրոցն ու սիրելի ուսուցիչներն այլեւս մնալու են ձեր ամենագեղեցիկ ու նվիրական հուշերում: Հետո արդեն, երբ կդառնամ հասուն մարդիկ եւ ձեզանից յուրաքանչյուրը ունենա իր ընտանիքը, ընտրած լինի կյանքի իր ճանապարհը, դպրոցը, ձեզ ճշմարտության առաջին դասեր տված ուսուցիչներն ու դպրոցական ընկերները կդառնան ձեր հիշողության լուսավոր էջերը: Վերջին զանգը նաեւ ազդարարում է նոր սկիզբ՝ դեռի մեծ կյանք, եւ փակելով ձեր կյանքի առաջին այս էջը՝ դուք բացում եք դուռը դեռի հասունություն: Ես շնորհավորում եմ ձեզ նոր կյանք մտնելու կարակցությամբ եւ ուզում եմ, որ դուք դառնաք մեր երկրի համար ոգեշնչի խաղացողներ, որպիսիներ դուք եք մեր երկրի առագան ու մեր վաղվա օրվա հենասյուները: Իսկ մենք մեր փորձառությամբ, մեր խորհուրդներով եւ մեր օժանդակությամբ միշտ կլինենք ձեր կողքին: Ասում եմ՝ վերջին զանգի հնչյունների տակ ոգեշնչ նվիրակաշ բոլոր երաշխիքներն իրականանում են: Ես մաղթում եմ ձեր բոլոր երազանքների եւ ցանկությունների իրականացում», շրջանավարտներին մաղթեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահն, ու մինչ ուշ երեկո Արովյան խաղահրապարակում շարունակվեց «ասդղային» հանդեսը, որի վերջին խաղի երկինքը լուսավորվեց շեղ եւ գունեղ հրավառությամբ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

12 հանձնաժողո՞վն է բարձրացնելու ԱԺ հեղինակությունը

1-ին էջից

Ցնցած հանձնաժողովների ձեւավորումը օրինագծի հեղինակ Հովհաննես Մարգարյանը երկրորդային համարեց՝ կարեւորն այժմ 12 հանձնաժողով ունենալու խնդրի լուծումն է՝ բացատրություն որպես ԱԺ հեղինակության, հանձնաժողովներում աշխատանքի արդյունավետության բարձրացումը դիտվեց՝ մյուս հանձնաժողովների գերբեռնվածությունը իջեցնելու հաշվին: Օրինագծերի հիմնական քննարկումներն այժմ արդեն հիմնականում ոչ թե լիագումար նիստերին, այլ գլխավորապես հանձնաժողովի նիստում պետք է տեղի ունենան: Ի դեմ, սկզբում օրինագիծը ներկայացրել էր միայն Հ. Մարգարյանը, ավելի ուշ նրա կոալիցիոն գործընկերներ Արա Նռանյանը, Նաիրա Զոհրաբյանը եւ Սամվել Նիկոյանը եւս փաստաթղթի տակ ստորագրություններ դրեցին: Նոր ստեղծված հանձնաժողովներն են տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման, բնապահպանության եւ բնօգտագործման, ինչպես նաեւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովները: Քանի որ երկու հանձնաժողովները ղեկավարվել են մինչ այս տարբեր հարցեր միասնաբար քննող հանձնաժողովներից, վերջիններիս անունները եւս ձեւափոխվել են:

Մեր հարցին, թե ինչ են արժեքնալու այս փոփոխությունները, օրինագծի հեղինակ Հ. Մարգարյանը պատասխանեց. «Ոչինչ էլ չեն արժեքնալու՝ պատգամավորի եւ մշտական գործող հանձնաժողովի նախագահի աշխատավարձի տարբերությունը 5 հազար դրամ է»: Այլ այստեղ, թույլ տվեք չհամաձայնել, պարոն Մարգարյան, աշխատավարձից բացի՝ ծառայողական մեքենա, խարտշտարների, փորձագետներ, բա տարբ ծախս չեն, թեեւ գուցե մեր եւ Ձեր թվաբանությունը տարբեր է, եւ իսկապես որ ծախս չեն:

Որքան էլ զարմանալի է՝ այս ընդարձակմանը դեմ էր միայն ընդդիմադիր «Ժառանգությունը», ՀՅԿ-ն էլ այնքան եռանդով չեր չկանգնեց փոփոխություններին, թեեւ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը աջակցող արտահերթ ելույթներ ունեցավ առաջին եւ երկրորդ ընթերցումների քննարկումներին: Ժառանգականները ընդդիմանում էին մի շարք փաստարկներով. Արմեն Մարտիրոսյանը, որ դեռեւս միացյալ սոցիալական, առողջապահության եւ բնապահպանական հարցերի հանձնաժողովի անդամ էր, դեմ էր արհեստական անջատմանը, քանի որ երեք ոլորտների շաս հարցեր փոխկապակցված են եւ համալիր լուծում են պահանջում: Անահիտ Բախչյանը, իր իսկ խոսքով, նույն մեխը խփեց. հանձնաժողով ավելացնելը բովանդակային հարց չի լուծում, այլ միայն հաղթական պայմանավորվածություններ, ինչը երկրում առկա հաղթական ճգնաժամի խնդիր չի լուծում, եւ շուտով պատասխանները բաշխելիս կերեւա, թե ինչ կա թաքնված այս նախաձեռնության տակ: «Այնչափո՞վ եք որոշում հանձնաժողովների գերբեռնվածությունը», հոնտոռական հարց ուղղեց Սյոռա Սաֆարյանը, նկատելով, որ ԱԺ աշխատանքի արդյունավետությունը ինստիտուցիոնալ ուղիների որոնմամբ պետք է գտնել, իսկ Լ. Ալավերդյանը մասնագույց արեց ԱԺ կանոնակարգը, ըստ որի՝ հանձնաժողովները ստեղծվում են նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, եւ այս հանձնաժողովների ստեղծումը, ըստ նրա, կանոնակարգի խախտում է: Բայց, օրինակ, ԲՅԿ-ն ներկայացնող Արամ Սաֆարյանին դուր էր եկել 12-ի խորհուրդը, եւ նա խորհուրդ տվեց իր գործընկերներին ոչ թե փայլ խրել ընթացող սայլի անիվների մեջ, այլ օգնել ձեւավորելու հանձնաժողովները:

Երեկ գումարված արտահերթ նիստում «Պետական կառավարչական հիմնարկների մասին» եւ հարակից երկու օրենքների փաթեթի փոփոխություններով, փաստորեն, նույնպես կոալիցիոն համաձայնությունների հարցեր էին լուծվում: Առաջին փաթեթով սահմանվում էր Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմը, հաղթաթղթական հատուկ ծառայության օրենքի շրջանակում որպես հատուկ ծառայողներ: Հարցին, թե մինչեւ աշխատակազմ սահմանելը ինչո՞ւ չի ընդունվում ԱԱԽ մասին օրենք, որով կսահմանվի այս օղակի եւ նրա աշխատակազմի լիազորությունները, բացի այդ, հարկ չկար պարզելու, թե մինչեւ այժմ ինչ ծավալով աշխատանք է իրականացրել ԱԱԽ-ը, ըստ դրա էլ աշխատակազմ սահմանվեր: Հարցը ներկայացնող արդարադատության նախարարի տեղակալ Գեւորգ Մալխասյանը այդ-մի օրենքի նախագիծ ընդունում կարեւոր չհամարեց աշխատակազմ սահմանելու տեսակետից. այս մարմինն առաջ նախագահին առընթեր էր, հիմա առանձին է եւ սահմանադրությամբ նախատեսված, նրանց լիազորությունների շրջանակն էլ կսահմանվի պատասխանների անձնագրով:

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 9.30-ին կառավարության ընդունելությունների տանը տեղի կունենա «Հայաստան» հիմնադրամի նիստը:

◆Ժամը 11.00-ին ֆինանսների նախարարության դահլիճում նախարարը եւ Ֆրանսիայի դեսպանը կստորագրեն վարկային պայմանագիր:

◆Ժամը 11.00-ին «Ռիա Նովոստի» հայաստանյան գրասենյակում (Վարդանանց 7) տեղի կունենա Վլադիմիր Կազիմիրովի մամուլի ասուլիսը:

◆Ժամը 11.00-ին էներգետիկայի նախարարությունում կստորագրվի Երեւանի ՋԷԿ-ի վերակառուցման լրացուցիչ վարկի հայտագիրը:

◆Ժամը 11.00-ին ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գրասենյակում տեղի կունենա հանձնաժողովի հերթական նիստը:

◆Ժամը 12.00-ին «Հայաֆ» մամուլի ակումբի հյուրն է Փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի գործադիր տնօրեն Իշխան Կարապետյանը:

◆Ժամը 12.00-ին «Փաստարկ» ակումբի հյուրն է «Ուխտ Արարատի» ամսագրի խմբագիր Տիգրան Փաշաբեզյանը: Թեմա՝ Սարդարապատի խորհուրդը 21-րդ դարում:

◆Ժամը 13.00-ին «Հայաֆ» մամուլի ակումբի հյուրն է «Ժառանգություն» խմբակցության անդամ Ստեփան Սաֆարյանը: Թեմա՝ «ԵԽԽՎ 1609 բանաձեւի պահանջների կատարում»:

◆Ժամը 13.00-ին «Հայաստան» հիմնադրամի գրասենյակում տեղի կունենա «Բազեի» մեկնարկային ասուլիսը:

◆Ժամը 14.00-ին Ազգային գրադարանում կբացվի ցուցահանդես՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության հռչակման օրվան:

◆Ժամը 15.00-ին Գրողների միությունում տեղի կունենա Հայաստանի կանայքների միության խորհրդի ընդլայնված նիստ:

◆Ժամը 15.30-ին «Ուրբաթ» ակումբի հյուրերն են Ժիրայր Սեֆիլյանի պատասխան Վահե Գրիգորյանն ու «Ժիրայր Սեֆիլյանի եւ Վարդան Մալխասյանի զորակցության կոմիտե»-ի անդամ Արմեն Աղայանը:

Տարաբնույթ

«Ապրում եմ ես այս լույս աշխարհում ամբողջ հիսուն տարի: Շատ բան ես հիմա այլ կերպ եմ տեսնում: Հիմա ես հասկանում եմ, որ միշ է գնահատել ինձ տրված ժամանակը, պետք է այն պրել, պետք է հասկանալ, որ մեզանից յուրաքանչյուրը կամ կայանում է իրեն տրված ժամանակի մեջ, կամ տանուլ է տալիս կյանքը: Եվ նա, ով շրջվել է իր ժամանակից, նա շրջվել է ինքն իրենից, իր կյանքից: Ուրիշ ժամանակ, ինչպես եւ ուրիշ կյանք մենք, ավա՜ղ, չունենք, չնայած քաղցր է մտածել, որ մահվանից հետո մեզանից ամեն մեկը կդառնա ճանապարհի եզրին ածած թաղ...»:

Այսպես է սկսում Լեւոն Մկրտչյանն իր «Հասունության վկայական կամ «Ա»-ն ընկավ, «Բ»-ն կորավ» ինքնակենսագրական վիպակը, որը հրատարակվեց 1983 թվականին, երբ լրացավ նրա հիսուն տարին: Այսօր 2008 թվականն է, եւ

75-ԱՄՅԱԿ

Ակադեմիկոս Լեւոն Մկրտչյան

Հիրալի մարդ իր ամբողջ կյանքում փնտրում էր հաղթական եւ բարոյական այն սկզբունքները, որոնց վրա կկարողանա հենվել իր առորյա կյանքում: Լեւոն Մկրտչյանն ուներ կյանքի իր չափանիշները: Նա միշտ զբաղվում էր իր սիրած գործով. եւ պատանեկության տարիներին, երբ հայրենի հաղթում՝ Բաքումում, կոլկայարի աշակերտ էր կամ ծովային ուսումնարանի ուսանող, եւ ուսումնառության ու ԵՊՀ-ում աշխատելու տարիներին, եւ երբ Գողթնի միության երկրորդ քարտուղար էր, ռուս-հայկական սլավոնական համալսարանի ռեկտոր, ԳԱԱ իսկական անդամ: Նա սիրում էր իր գործը եւ լավ էր կատարում:

Լեւոն Մկրտչյանը նաեւ ազատ մարդ էր. ազատ իր գրվածքներում, կարծիքներում, աշխարհընկալմամբ, պահվածքով: Գրում էր այն մասին, ինչը հուզում էր, ինչը հավանություն էր իր ներին պահանջմունքին: Սխալներ, փորձություններ, դառնություններ կային նաեւ նրա կյանքում, սակայն փորձում էր փնտրել ու գտնել իր մեջ ներին կատարյալ մարդուն եւ շարունակել արարել:

Լեւոն Մկրտչյան մարդն ու հաղթացին արդում էր մոլորակի տագնապներով. անհանգստանում աշխարհում հայտնված եւ բազմացող մանկուրտներով. հասարակությանը զուգահեռացնել ցանկացող մի խումբ մարդկանց վարագույր, ժողովուրդներին բաժին ընկնող դառնություններով: «Ես կուզենայի,- գրում է Լեւոն Մկրտչյանը,- որ աշխարհի բոլոր մարդիկ ճանոթ լինեին Ֆ. Դոստոյևսկու խոսքերին. «Մենք մեղավոր չունենք, միայն ճշմարտությունն է, ուրեմն անարդարացի է»: Նա անհանգստանում էր, որ շատ մարդիկ բառը, խոսքը գիտեն, բայց իմաստը չեն հասկանում, մինչդեռ իմացողը, բայց չհասկացողը կարող է շատ փորձանքներ բերել. «Չէ՞ որ մարդկային բարդ հարաբերություններում նա կոնդի միայն ճշմարտությունը՝ առանց մեղքության»:

Լեւոն Մկրտչյանի համար բնությունը աշխարհը հասկանալու, կյանքն իր բազմազանության, մարդուն իր աստվածային արարչագործության մեջ տեսնելու բանալին էր: Նա պահը, ժամանակը, ակնթարթն զգալու մեծ վարպետ էր: Կարողանում էր տեսնել, նկատել բնության ձայների, գույների, լույսի ու սվերի ամենանրբին ու աննկատ թվացող անցումները՝ գարնանը Փարիզում ծաղկող շագանակենիների հոտը, երբ սոիսակ-վարդագույն ողկուզաձեւ ծաղիկների մեջ կոչում էր Փարիզը, Նիագարայի խելահեղ գահավիժումը, 60 հազարից ավելի զմուխտյա լճերով պատավորած ֆիններին երկիրը, մեքսիկական հազար ու մի առեղծվածներով լի բնաշխարհը, մոնղոլական տափաստանները, աֆրիկական անապատների վրա կախված արեւի հրե գունդը...

Նրա մարդկային նկարագրի ուրույն կողմերից մեկն էլ աշխարհով մեկ սփռված նրա զարմանալի սերն էր, բարեկամություն հաստատելու, աշխարհին իր հայրենիքը տեսանելի դարձնելու կարողությունը. «Բարեբախտաբար մարդիկ ընկերություն են անում ոչ թե հանդիպումից հանդիպում,- գրում է Լեւոն Մկրտչյանը: - Օվկիանոսի ալիքները հանդիպում ու բաժանվում են, մինչդեռ մարդը մարդու հետ հանդիպելուց հետո իր հետ տանում է նրա խոսքը, հայացքը, հասկանում նրա հույսն ու տպասումը»: Ոտի ինչի մասին էլ նա գրում էր, որտեղ էլ որ լինում էր, ում հետ էլ որ բարեկամանում էր՝ գիտնականներ, գողներ, արվեստագետներ, թե հասարակ մարդիկ, մտածում էր իր ժողովրդի մասին, բոլոր ճանապարհները վերադարձնում էին նրան հայրենիք. «Ֆինլանդիայում լիճ կա, իսկ լճի վրա՝ կղզի, կղզու վրա՝ էլի մի լիճ: Իսկ Հայաստանում լեռներ են, իսկ այդ լեռների վրա՝ ուրիշ լեռներ,- գրում է Լ. Մկրտչյանը,- Հայաստանում պետք է որ 60. 000-ից ավելի լեռներ լինեն, եւ բաղաձայնների առատությունը, հավանաբար, քարերի առատությունից է: Այդ մասին մտածեցի 60.000 լճերի երկրում, որտեղ խոսում են փափուկ, երգեցիկ ձայնավորների լեզվով: Իմ այն հարցին, թե լճերից որ մեկում պետք է փնտրել ջրահարսի սրտի բանալին, ֆին բարգմանչուհին պատասխանեց, որ բարգմանչի համար նույնքան դժվար է գտնել բնագրի բանալին, ինչպես ֆիննական լճերում ջրահարսի սրտի բանալին...»:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Լեւոն Մկրտչյանի մասին շատ է գրվել եւ դեռ կգրվի: Մի բան պարզ է. նրա հոգու ու սրտի բանալին իր ժողովրդի ձեռքում է, իսկ բացել կարող է ամեն ոք, ով ուզում է ճանաչել ու հասկանալ նրան...

ՌՈՒԲԵՆ ՏԱՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ,
ԵՊՀ ռուս գրակ. ամբիոնի դոցենտ

ՈՍԿ ՍԱՄՈՒԷԼ

Տագնապը Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ

Հայաստանեայց եկեղեցւոյ տագնապը շուրջ յիսուն տարուան անցեալ եւ խորութիւն ունի: Բացուած վէրքը երբ կարելի չեղաւ դարմանել ատենին, ան հետզհետէ խորացաւ եւ վերածուեցաւ խլիրդի: Այսօր զայն բուժելու մասին խօսք իսկ չկայ, եղածը կատարուած իրողութիւն նկատելով:

Բայց շարունակելէ առաջ հարկ է պատմական հակիրճ ակնարկ մը նետել մօտիկ անցեալին վրայ: Սիսէն Անթիլիաս փոխադրուած ազգային Կիլիկեան աթոռին գործունէութեան տարիներ տուեցան Սուրիոյ, Լիբանանի եւ Կիպրոսի թեմերը, Ամենայն հայոց կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի ու Պոլսոյ պատրիարքութեանց համամտութեամբ, ի հոգեւոր ենթակայ մնալով Մայր աթոռ Ս. Էջմիածնին: ՀԲԸՄիութեան, Կիլիկեան հաստատութեան եւ այլ նուիրատուութիւններով հիմնուեցաւ դպրեվանք ու տպարան, ուրկէ լոյս տեսան «Հասկ» պատմագրութիւնը ու կրօնական բնոյթի բազմաթիւ գիրքեր: Մինչեւ երանաշնորհ Գարեգին Ա Յովսէփեանցի գահակալութիւնը Անթիլիասի կաթողիկոսութիւնը դարձաւ լոյսի ու յոյսի փարոս մը ախոռէն ու Մեծ եղեռնէն վերադարձած Մեծաւոր Արեւելքի նորահաստատ հայ գաղութներուն համար, համաբաժնորհութեամբը եւ օրհնութեամբը Մայր աթոռին:

Բայց Համաշխարհային Բ. պատերազմէն յետոյ այդ համաբաժնակցութեան մէջ փոփոխութիւն մը յառաջ եկաւ, Արեւելք-Արեւմուտք հակամարտութիւն մը սկսաւ, որ հետզհետէ սրելով բռնամարտի եւ փոխադարձ սպառնալիքներու աստիճանին հասաւ: Արեւելք ըսելով պետք է հասկնալ մասնաւորաբար Սովետական Միութիւնն ու իր արբանեակ պետութիւնները, որոնց մէջ անշուշտ Հայաստանն ալ կար: Արեւմուտքը խոր մտահոգութեամբ կը տեսնէր համայնավար յեղափոխութեան համաշխարհային ծաւալումը եւ զայն վտանգաւոր նկատելով իր ընկերային, տնտեսական դրամատիրական վարչաձեւին՝ սուր պայքար ձեռնարկեց անոր դէմ: Հակահամայնավար այս վայրագ պայքարին ալիքները հասան նաեւ հայ իրականութեան եւ սփիւռքահայութիւնը երկփեղկուեցաւ հայաստանեան եւ հակահայաստանեան ճակատներու: Ոմանք, հայկական բարեգործական ընդհանուր միութեան, հնչակեան եւ համայնավար հոսանքները կազմեցին «հայաստանեան ճակատը», իսկ հայ յեղափոխական դաշնակցութիւնն ու իր արբանեակները՝ «հակահայաստանեան ճակատը»:

ՈԱԿ եւ ՀԲԸ Միութիւն Հայաստանի հանդէպ իրենց դրական կեցուածքը կ'արդարացնին խորհրդային Հայաստանին միակը եւ միակ կարելին ըլլալուն իրականութեամբ, իրենց պրօ-հայաստանեան արտայայտութեանց ու գործունէութեան միտ կցելով «թէեւ չենք բաժներ հոն տիրող վարդապետութիւնը», կամ «վարչաձեւն անկախաբար» բանաձեւումները, որոնք անշուշտ ճշմարտութեան ալ կը համապատասխանին, մինչ Դաշնակցութիւնը, սոցիալիստական նման վարդապետութեան մը հետեւելով թէեւ մօտ էր համայնավար գաղափարաբանութեան, բայց Արեւմուտքի նիւթական, բարոյական ու հաղթական հաշտերանոով կը գլխաւորէր հակահայաստանեան ճակատը: ՀՅԴ մտահան չէր կրնար ընել նաեւ իր երազը, որ համայնավար ոեժիմին տապալումով ճամբայ կրնար հարթուիլ իր տիրապետութեան: Այս կացութիւնը թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ պատճառ եղաւ եղբայրասպան կռիւներու եւ Անթիլիասի կաթողիկոսութիւնը մղեց Ս. Էջմիածնայ Մայր աթոռին դէմ ըմբոստ դիրքի: Այնուհետեւ ՀՅԴ ձեռնամուխ եղաւ Անթիլիասի կաթողիկոսութիւնը ձեռք ձգելու պայքարի մը, որ հասաւ ծայրայեղ հանգրուաններու եւ եղբայրասպան կռիւներու եւ վերջապէս, միտ ամերիկեան քաղաքերանոով եւ նախագահ Շամունի ու Լիբանանի ոստիկանութեան բռնի միջամտութիւններով Անթիլիասը ենթարկուեցաւ ՀՅԴ-ին, վերածուելով քաղաքական նպատակներու ծառայող կրօնական հաստատութեան մը: Այնուհետեւ Անթիլիաս ձեռնարկեց քաղաքական ծաւալման արշաւի մը, Սփիւռքի տարածքին հիմնելով եկեղեցական մրցակից կամ հակաթոռ թեմեր, արդէն իսկ գոյութիւն ունեցող Էջմիածնայ Մայր աթոռին կողմէ հիմնուած թեմերուն: Այսպէսով պատակոյտը սացաւ աւելի մեծ ծաւալ ու սուր բնոյթ՝ Անթիլիասէն տարածուելով սփիւռքահայ գրեթէ բոլոր համայնքներէն ներս: Արդարացման փորձը որքան պարզ թուացող, նոյնքան ալ չարամիտ էր, պատճառաբանելով, որ Մեծաւոր Արեւելքի հայ ժողովուրդն է, որ տարածուած է դէպի Արեւմուտք, հետեւաբար Անթիլիասի կաթողիկոսութեան պարտականութիւնն է տէր կանգնիլ իր հօտին: Կարծես թէ այդ ժողովուրդը անթիլիասական հպատակութիւն ունէր եւ անտեսելով այն իրականութիւնը, որ անոնք արդէն Ամենայն Հայոց կաթողիկոսութեան թեմեր էին, ու խախտելով նաեւ այն համաձայնութիւնը, որով Անթիլիասի եկեղեցական իշխանութեան տարածը ճշդուած էր՝ Սուրիոյ, Լիբանանի եւ Կիպրոսի վրայ: Հապա Իրանի հայ համայնքնե՞րը. անո՞նք ալ Անթիլիասի պատկանող նախկին թեմեր էին: Անուրանալի իրականութիւնը այն է, որ իրանահայութիւնը ոչ մէկ կապ ունեցած է Անթիլիասի հետ: Անթիլիասի (իմա՝ ՀՅԴ) ծաւալապաշտական արշաւին սուր ու պատիր պատճառաբանութիւնը, Իրանի օրինակով, փուլ կու գայ՝ անգամ մը եւս փաստելու համար, որ ուրիշ էին շարժառիթները, քաղաքական հեռաւոր նպատակները, որոնք կը ձգտին սփիւռքահայութիւնը լծել ամերիկեան հակահամայնավար պայքարի կառին, առանց նկատի առնելու այն իրականութիւնը, որ Հայաստան կը գտնուէր համայնավար վարչակարգի տակ, հետեւաբար, հայկական շահերու հակառակ էր այդ պայքարին Սփիւռքի լծուիլը: Սակայն թէ ո՞ւր հասաւ եկեղեցական տագնապին խորը կազմող քաղաքական պայքարը, անգամ մը եւս փաստելով, որ սխալ դեկավարութիւն մը կրնայ ափսոսալի կացութիւններու առաջնորդել հաւանականութիւն մը, կամ ազգ մը ամբողջ: Վաղուց ի վեր Ս. Միութիւն գոյութիւն չունի եւ անոր հետ Հայաստանի համայնավար վարչաձեւն ալ պատմութեան անցած է, բայց եկեղեցական երկփեղկուած վիճակը կը շարունակուի:

Եթէ Հայաստանի համայնավար վարչաձեւն էր եւ Մայր աթոռին ալ նոյն վարչաձեւին տակ գտնուիլն էր պատակոյտին «արդարացում»ը, երկար ժամանակէ ի վեր փոխուած է կացութիւնը Հայաստանի եւ Ս. Էջմիածնայ մէջ: Ժամանակը չէ՞, որ Անթիլիաս ալ փոխէ իր ընթացքը գործնականօրէն ճանչնալու համար Մայր աթոռին վերին իշխանութիւնը՝ վերջ տալով հայ եկեղեցւոյ պատակոյտին:

ՀԱՅԿ ՆԱԶԱՐԵԹԵՆ,
Մոնրեալ

ԼՈՒՅՍ
27 ՄԱՅԻՍ 2008 ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ ԿԻՆՈ

Կանի էկումենիկ ժյուրիի մրցանակը

Ատոմ Էգոյանի «Երկրպագություն» ֆիլմին

Կանի կինոփառատոնում Ատոմ Էգոյանի «Երկրպագություն» ֆիլմի առաջին ցուցադրության ավարտին դահլիճը մոտ 15 րոպե հոսնկայս ծափահարել է, մի քան, որ հազվադեպ է պատահում միջազգային հեղինակավոր կինոփառատոներում: «Ոսկե ծիրան» կինոփառատոնի տնօրեն **Հարություն Խաչատրյանը** Ֆրանսիայից մեզ հայտնեց, որ Էգոյանի ֆիլմը արժանացել է Կանի էկումենիկ ժյուրիի մրցանակին:

Տուցադրման նախորդ օրը՝ մայիսի 22-ին, Էգոյանը ֆիլմի ստեղծագործական խմբի անդամների՝ դերասաններ Սիմոն Ուրդ եւ Ջենիֆեր Վայսի, դերասաններ Ռաբել Բլանշառի, Դեւոն Բոսֆիի եւ Սկոթ Սոֆիդանի հետ հրավիրվել է մամլո ասուլիսի, որի ժամանակ խոսել է ֆիլմի գաղափարին անանցվող մի շարք հարցերի մասին: Ֆիլմի գլխավոր դերակատար Դեւոն Բոսֆին ասել է, որ սցենարն եւ այն ոգին դիտեն ամենուս: Ես գիտեի, թե որքան կարեւոր են Ատոմի ֆիլմերը եւ այն բոլորը դասերը, որ հնարավոր է քաղել նրա ֆիլմերից: Իմ կադրերը սկսվեցին առանց խոսքերի, ես անչափ հուզված էի եւ ասիճանաբար կարողացա մտնել դերի մեջ եւ ավելի լավ զգալ ստեղծագործական մթնոլորտը»:

Կանադական դպրոցի ուսուցչուհին, որի դերում հանդես է գալիս Արսինե Խանջյանը, աշակերտներին հանձնարարում է ֆրանսերենից թարգմանել մի հոդված այն մասին, թե ինչպես է մերձավորարեւելյան ծագումով մի ահաբեկիչ իր հոգի ընկերուհու պայուսակում ռումբ տեղադրում, պայթեցնելու համար այն ինքնաթիռը, որի մեջ պիտի լիներ իր ընկերուհին, սակայն ռումբն ի վերջո հայտնաբերվում է:

Ֆիլմի հերոսը՝ Սիմոնը ինտերնետի միջոցով իր ընկերներին հայտնում է, որ ահաբեկիչը իր հայրն է եղել, իսկ նրա ընկերուհին հոգի էր հենց իրենից:

առաջին անգամ կարդալիս այնպիսի զարմանք է առթել, որ ցանկացել է այն վերընթերցել մի քանի անգամ: «Ատոմի սցենարներում այնքան բան կա, որ պետք է թափանցել դրանց խորքերը: Այնտեղ միայն մի գլխավոր սյուժե չէ, ոչ էլ ընդամենը մեկ պատմություն, դրանք տարբեր պատմություններ են՝ ամեն մեկն այնքան բան ուսուցանող: Երբ իմացա ընտրվել եմ գլխավոր դերում, ուրախությունից բղավեցի, որովհետեւ գիտեի, թե ինչ հրաշալի աշխատանք պիտի անեմ

Իր ֆիլմով Էգոյանը ցանկացել է ասել է, որ հակառակ տարածված կարծիքի, ինտերնետը ոչ թե համախառիային հաղորդություն է ծեւավորում, այլ առանձին խմբեր, որոնք միավորվում են ըստ հետաքրքրությունների: -

«Ինտերնետի գլոբալ լինելու գաղափարը մի բան է, որ ես տեսել եմ: Դա արդեն կլիշե է դարձել: Բայց փաստորեն իրականությունն այն է, որ գոյություն ունեն դրանով հետաքրքրվող փոքր խմբեր: Ես օգտվում եմ տեխնոլոգիաներից, երբ դրա կարիքն ունեմ: Մենք հիմա ունենք Սեյլֆի եւ կարող ենք աշխատել խմբերով, ինչը հեռագայում ավելի տարածում կգտնի: Բայց ես ցանկացել եմ ցույց տալ մարդկանց մտերմությունը, որ ի վերջո նրանք կարիք ունեն միմյանց հետ շփվելու, իրար պատասխանելու: Մարդկանց փոքր խմբերի մասին է, որոնք համացանցը օգտագործում են մտերմիկ կապեր ստեղծելու համար:

Կարծում եմ, ի վերջո, մենք պետք է ձեւեր գտնենք միմյանց հետ շփվելու, միշտ էլ եղել է միմյանց ինչ-որ բան փոխանցելու, պատմելու անհրաժեշտությունը: Հիմա դա արվում է նոր տեխնոլոգիաների միջոցով: Ինտերնետի հետ կապված հարցը այն է, որ մենք ձգտում ենք միմյանց կյանքին ավելի մոտ լինել, մի բան, որ առաջներում հնարավոր չէր պատկերացնել: Ինչ է դա նշանակում՝ պարզել այն հարցերը, որոնց կարիքը զգում ես: Հատկապես՝ եթե դա ընտանեկան վիճակի հետ է կապված, ինչպես ֆիլմի հերոսի պարագայում է: Նրան ոչինչ չի ասվել իր ընտանիքի մասին եւ նա օգտագործում է նոր տեխնոլոգիաները գտնելու մեկ այլ անձնավորության, որը թույլ կտա գնալ այնտեղ, ուր նրա պարը, կամ հորեղբայրը թույլ չեն տվել գնալ միայնակ: Նա հանգում է մի կետի, որ դառնում է ինքնուրույն եւ այդ ձեւով անցնում է իր կյանքի ճանապարհը: Ինտերնետը օգնում է նրան գտնելու ինքն իրեն: Ֆիլմը ինտերնետի մասին չէ, այլ թե ինչպես է ինտերնետը երիտասարդի համար դառնում ինքնարտահայտման եւ ինքնահաստատման միջոց:

Մենք գնացինք այդ ճանապարհով եւ տեսանք, թե ինչպես են մարդիկ միմյանց պատմում իրենց գաղտնիքները: Նրանք առավելագույնս արտաքց են միմյանց հանդեպ: Այդ գաղտնիքները ստեղծվել են, որովհետեւ մարդիկ ունեցել են դրանց կարիքը: Ամեն մի ընտանիք իր գաղտնիքն ունի, քանի որ մարդիկ կամենում են գտնել ինչ-որ առեղծվածային մի բան, ինչ - որ ձեւով բացատրել եւ պատմել ուրիշներին: Դա կարող է լինել ճիշտ, կամ ոչ, բայց դա այն է, ինչին իրենք ուզում են, որ ուրիշները հավատան: Դա պարզապես մարդու էությունն է: Ինձ ամբողջ ժամանակ զարմացել է այն է, թե որքան առեղծվածային է մեկ այլ էակի գոյությունը: Դա այնքան էլ պարզ բան չէ: Թեպետ շատ ֆիլմերում այնպես են ներկայացվում, թե դա ամենաբնական, պարզ բանն է, բայց փաստորեն այնքան էլ հետաքրքիր չէ մարդկանց մտերմությունը եւ վստահությունը ձեռք բերելը: Դրանք չեն առաջանում անմիջապես: Դա մի հարց է, որն ինձ միշտ գրավել է եւ դա է պատճառը, որ ֆիլմում պատմությունները պատմվում են հենց այդ ձեւով:

Ֆիլմը նաեւ այն մարդկանց մասին է, որոնք փնտրում են այն անձին, որը կարող է իրենց ինչ-որ բան պատմել իրենց կյանքի մասին: Սաբինը կամ Թոմը, երկուսն էլ կարիք ունեն միմյանց պատմություններ պատմելու, իսկ Սիմոնը կարիք ունի ունկնդրելու: Այսպիսով, ես ավելի մտահոգված եմ եղել իմ կերպարների զգայական հարցերով ի հակադրություն նոր տեխնոլոգիաների: Տեխնոլոգիան ընդամենը միջոց է մարդկանց համար գտնելու կամ զգալու այն, ինչն իրենց արգելված ու մերժված է եղել»:

Ատոմ Էգոյանի «Երկրպագություն» ֆիլմը մեր կինոսերները կդիտեն հուլիսի 20-ին՝ «Ոսկե ծիրան» 5-դ կինոփառատոնի փակման օրը:

Պատրաստեց
ՈՍԻՆԷ ՊՈՂԱՍՅԱՆԸ

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆԸ» ԿԼՈՂՈՒՄ

«Վիվասելի» հովանավորությամբ

Կանի 61-դ միջազգային կինոփառատոնում «Ոսկե ծիրանն» առաջին անգամ արժանացավ ջերմ ուշադրության, որի փայլուն վկայությունը Ֆրանսիայում «Ոսկե ծիրանի» ներկայացուցիչ Ռայմոնդ Եզեկելյանի տանը մայիսի 23-ին անցկացված ընդունելությունն էր, մասնակցությամբ բազմաթիվ կինոգործիչների, պրոդյուսերների, հեղինակավոր փառատոների կազմակերպիչների: Հյուրերին պատվել են «Ոսկե ծիրանի» նախագահ Ատոմ Էգոյանը եւ տնօրեն Հարություն Խաչատրյանը: Ընդունելությանը ներկա են եղել մեր փառատոնի հին եւ նոր բարեկամները՝ Ֆրանսիացի կինոռեժիսոր Բրունո Դյումոնը, որն այս տարի Կանի Ոսկե խցիկ մրցույթի ժյուրիի նախագահն էր, կինոռեժիսորներ Հու Սյաո Սյանը, Վիմ Վենդերսը եւ ուրիշներ: «Ազգի» հետ հեռախոսազրույցում «Ոսկե ծիրանի» տնօրեն **Հարություն Խաչատրյանն** ասաց, որ մեր փառատոնի հանդեպ ուշադրությունը չափազանց մեծ է, հայկական կինոն հետաքրքրում է շատերի եւ մեծ թիվ են կազմում մեր փառատոնին այս տարի մասնակցելու ցանկություն ունեցողները:

«Ոսկե ծիրանի» ընդունելությունն ուղղակի հրաշալի անցավ, մինչեւ ուշ գիշեր հյուրերը զրուցում էին մեզ հետ հայկական կինոյի եւ Հայաստանի մասին: Այնքան ջերմ ու հարազատ մթնոլորտ էր ստեղծվել: Մեր փառատոնը ճանաչվեց Կանում, մնում է, որ մյուս տարի պավիլիոն ունենանք, որ հայկական կինոն ավելի լավ ներկայացնենք այստեղ: Ուկրաինան եւ Վրաստանը արդեն հասել են դրան, չնայած որ Կանի ծրագրում հայկական ֆիլմերն ավելի շատ են: Մեր ֆիլմերը ցուցադրելու հետ փորձում ենք Կանի մյուս բաժինները եւ արտադրությունները ներգրավել մեր ֆիլմերի մի քանիսը բերել մեր փառատոն», ասաց Հարություն Խաչատրյանը: Ընդունելությանը ներկա են եղել նաեւ Կանի կինոփառատոնին մասնակցող Դիանա Մկրտչյանը, գյումրեցի երիտասարդ Արման Թադեւոսյանը իր գերժանացի պրոդյուսերի հետ, Վրեժ Քասունու «Սեր եւ ...» ֆիլմի դերասանուհի Անուշ Եզեկելյանը եւ ուրիշներ:

«Ոսկե ծիրանի» տնօրենը երեկ Կաննից մեկնել էր Փարիզ, որտեղ Ելիսեյան Պալատի 34 հասցեում բացվեց «Ոսկե ծիրան» կինոփառատոնի ֆրանսիական ներկայացուցչությունը:

«Ոսկե ծիրանը» առաջին անգամ Կաննում ներկայացնելուն աջակցել էին նաեւ «Արցախ ալկո» ընկերությունը, «Արարատ» կոնյակի գործարանը եւ Եզեկելյանների ընտանիքը:

«Ոսկե արմավենի»

Ֆրանսիայի միջերկրածովյան Կան հաղորում մայիսի 25-ին ավարտված հեղինակավոր միջազգային կինոփառատոնում գլխավոր մրցանակը՝ «Արմավենու ոսկե ճյուղը» շնորհվեց ֆրանսիացի բեմադրիչ **Լորան Կանտեի** «Պատերի միջեւ» ֆիլմին: Փառատոնի ժյուրիի նախագահ Շոն Փենը փառատոնի փակման հանդիսավոր արարողության ժամանակ ֆիլմը բնութագրեց «սահնչելի» բառով:

«Պատերի միջեւ» ֆիլմը պատմում է փարիզյան անապահով ընտանիների զավակների ելեջի ֆրանսերենի մի ուսուցչի առօրյա կյանքի մասին: Պատմության հիմքում ֆրանսուա Բիգոդոյի ինքնակենսագրական վեպն է:

Մրցանակը Լորան Կանտեին հանձնեց աֆրիկահոչակ դերասան Ոբերտ դե Նիրոն: Կանտեն իր ելույթում ասաց, որ նրա համար պատիվ է ունեցել ֆիլմ նկարահանել ֆրանսիական «արդի հասարակության բազմաբնույթ եւ բարդ կյանքի մասին»:

Լավագույն դերասանի համար նախատեսված մրցանակը շնորհվեց **Բենիսիո դել Տորոյին**՝ Սթիվեն Սոդերբերգի «Չե» ֆիլմում լատինամերիկացի հայտնի հեղափոխական Չե Գեւարայի կերպարի մարմնավորման համար:

Լավագույն դերասանուհի ճանաչվեց բրազիլուհի **Սանդրա Կորվելյոնին**՝ Ուոլթեր Սելլսի եւ Դանիելա Տոմի «**Անցման գծեր**» ֆիլմում գլխավոր դերակատարման համար:

«Լավագույն բեմադրիչ» մրցանակին արժանացավ թուրք **Նուրի Բիլգե Ջեյլանը**՝ «**Երեք կարիկ**» ժապավենի համար:

Լավագույն սցենար ճանաչվեց **Լյուկ եւ Ժան-Պիեռ Դարդենների** «**Լորենայի լռությունը**» աշխատանքը:

Կինեմատոգրաֆին մատուցած ծառայությունների համար մրցանակներ սպասան **Կարին Ալոյվը** եւ **Քլինթ Իսթվուդը**: Վերջինս Կանն էր եկել իր նոր՝ «Փոխանակում» ֆիլմով, որտեղ գլխավոր դերում հանդես է գալիս Անջելինա জոլին:

Փառատոնի ժյուրին հատուկ մրցանակ շնորհեց կալաբրիական մաֆիայի մասին պատմող «**Գոմորրա**» ֆիլմին: Ժյուրիի «Ոսկե կինոխցիկ» հատուկ մրցանակին արժանացավ ռուսաստանցի Վալերիա Գայ Գերմանիկի «**Բոլորը կմեռնեն, իսկ ես կմնամ**» առաջին լիամետրաժ ֆիլմը:

Կաննի փառատոնը՝ կինոյի զարգացման նոր փուլ

Ֆրանսիայի միջերկրածովյան Կանն քաղաքում անցկացված ավանդական այս փառատոնը կինոմենեջերները համարում են հոլիվուդյան կինոյի եւ արտհաուսի ճակատամարտ: 61-րդ անգամ անցկացվող հեղինակավոր կինոփառատոնի ծրագրում ներկայացված էին 54 լիամետրաժ ժապավեն եւ 26 կարճամետրաժ ֆիլմ: Մրցութային ծրագրում ընդգրկված էր 22 կինոնկար, որոնց մեջ ռուսական որեւէ ֆիլմ չկար:

«Այստեղ չկա որեւէ քաղաքականություն, կա միայն տաղանդավոր, դիտարժան կինո: Ես նույնիսկ չեմ ուզում սա մրցույթ անվանել: Ի վերջո, մենք ոչեմ է ընդհանուր համաձայնության հասնենք, որպեսզի որեւէ մեկը չվիրավորվի, որպեսզի ամենքի մեջ մնա տոնի զգացողությունը», հայտարարեց ամերիկացի նշանավոր կինոգործիչ Շոն Փենը փառատոնի բացման ժամանակ:

Կազմակերպիչների գնահատմամբ, Կանի 61-րդ փառատոնը նոր փուլ է կինոյի զարգացման մեջ: Քննադատները պնդում են, որ տվյալ նոր քայլը կարող է ցասկ դառնալ ինչպես հեռագա առաջընթացի, այնպես էլ լուրջ ճախողման համար: Համաշխարհային կինոյի վարպետների հետ մեկտեղ մրցույթին մասնակցում էին նաեւ գրեթե անհայտ բեմադրիչներ, որոնցից է, օրինակ, հունգարացի Կորնել Մունդրուցոն եւ իսրայելցի Արի Ֆոլմանը:

Փառատոնը բացվեց բրազիլացի բեմադրիչ Ֆեռնանդու Մեյրելլիսի «Կուրություն» ֆիլմով: Դա Նոբելյան մրցանակի դափնեկիր Ժոզե Սարամագոյի համանուն գրքի էկրանավորումն է: Նրա «Կուրությունը» մարդկանց կոչ է անում աչքերը լայն բացել. ներկայումս մարդկությունը անհոգ կերպով սահում է բարակ սառույցի վրա: Հետեւանքը հասկանալի է. անխուսափելիորեն տեղի կունենա անկում: Փառատոնի

Վուդի Ալենը վերադարձել էր կատակերգությամբ

Կանի փառատոնին Վուդի Ալենը ներկայացավ իր նոր աշխատանքով: Քննադատներն այս կապակցությամբ ասում են, որ նա վերադարձել է իր «ֆիրմային ոճին», այսինքն կատակերգությանը:

Վերջին տարիներին նա նկարահանել էր փիլիսոփայական ենթատեքստ ունեցող մի քանի մռայլ ֆիլմեր: Բայց այժմ նշանավոր բեմադրիչը ներկայանում է աշխույժ կատակերգությամբ, որը կոչվում է «Վիկի Քրիստինա Բարսելոնա»: Ֆիլմը պատմում է երկու երիտասարդ ամերիկուհիների՝ Վիկիի (Սկարլետ Յոհանսոն) եւ Քրիստինայի (Ռեբեկա Հիլ) մասին, որոնք ամառային արձակուրդին մեկնում են Բարսելոն (Իսպանիա): Այնտեղ նրանք սիրավեպ են սկսում մի հմայիչ նկարչի հետ, որի նախկին կինը բռնակալ է: Ի վերջո նկարչին (որի դերը կատարում է Խավիեր Բարդեմը) հաջողվում է ոչ միայն հետ մղել նախկին կնոջ հարձակումները, այլեւ զուգակցություն պահպանել սիրային եռանկյունում:

«Երկուսը լավ է միայն էկրանի վրա, բայց իրական կյանքում բավական դժվար է նույնիսկ մեկն ունենալ: Երկուսն ավելի շուտ լոկ մեծ բարդություններ են ստեղծում, եւ մեզանից իչերը կարող են դուրս գալ նման իրավիճակից», կարծում է Վուդի Ալենը: Բեմադրիչն ասում է, որ ինքը ջանացել է ստեղծել ծիծաղելի ֆիլմ, բայց միեւնույն ժամանակ դա համարել է ողբերգական հեքիաթ այն մարդկանց մասին, ովքեր խճճվում են սեփական զգացմունքների մեջ կամ չեն կարողանում սիրահարվել:

Եկել էին նաեւ իտալացիներ

Ութ տարի տեւած ընդմիջումից հետո Կանի փառատոնի մրցութային ծրագրում կար իտալական 2 ֆիլմ՝ Մասսեո Գարոնեի «Գոմորը» եւ Պաոլո Սորրենտինոյի «Հրաշալին»:

Երիտասարդ, բայց արդեն ճանաչում գտած բեմադրիչ Մասսեո Գարոնեի ֆիլմը նկարահանված է նեապոլցի գրող Ռոբերտո Սավիանոյի հանրահայտ ստեղծագործության հիման վրա, որն աշխարհում վաճառվել է միլիոնավոր օրինակներով եւ թարգմանվել 33 լեզուներով: Կինոնկարը պատմում է Իտալիայի կյանքի սպվերոս կողմերից մեկի՝ նեապոլյան մաֆիայի մասին, որը վերահսկում է մասնավոր թափոնների օգտահանումը:

Պաոլո Սորրենտինոյի «Հրաշալին» ֆիլմը նվիրված է հետպատերազմյան Իտալիայի նշանավոր քաղաքական գործիչ, քաղաքական գործիչ, երկրի բազմակի վարչապետ, իսկ այժմ ցմահ սենատոր জուլիո Անդրեոտտիին: Մեկ ուրիշ իտալական ֆիլմ՝ Մարկո Տուլիոյի «Կատաղած արյունը» ցուցադրվեց փառատոնի մրցույթից դուրս՝ «Հատուկ սեանս» ծրագրի շրջանակներում:

Կաննում

Գլխավոր մրցանակը շնորհվեց Լորան Կանտեի ֆիլմին

«Եվրոպական տաղանդ» մրցանակը տրվեց Էստոնացի բեմադրիչին

«Եվրոպայի օրերի» շրջանակներում «Եվրոպական տաղանդ» հեղինակավոր մրցանակին արժանացավ Էստոնացի 36-ամյա բեմադրիչ Վեյկո Իումոտուն իր առաջին ֆիլմի՝ «Սուրբ Անտոնիոսի գայթակղության» սցենարի համար: Ֆիլմը սեւ հումորի ժանրի կատակերգություն է, Էստոնացի երիտասարդ կինոգործիչի առաջին լիամետրաժ գործը:

Վավերագրական կինոյի նոր որակ

Փառատոնում մեծ տպավորություն գործեց մրցութային ծրագրի շրջանակներում իսրայելցի բեմադրիչ Արի Ֆոլմանի «Վալս Բաշիրի հետ» հակապատերազմական ստեղծագործության ցուցադրումը: Այն նվիրված է 25-ամյա վաղեմության իրադարձություններին՝ Լիբանանում իսրայելական բանակի գործողություններին: Այուժեի կենտրոնում պատմությունն է այն մասին, թե ինչպես է փոխվում մարդու հոգեբանությունը պատերազմի ժամանակ: Ֆիլմում նկարագրվող իրադարձությունների ընթացքում ինքը՝ բեմադրիչը, իսրայելական բանակի կազմում եղել է Լիբանանում. «Իմ խնդիրն է ոչ թե մատնանշել մեղավորներին, այլ հասկանալ, թե ինչ է կատարվում մեզ հետ», Կաննում կազմակերպված մամլո ասուլիսում հայտարարել է Ալի Ֆոլմանը:

«Վալս Բաշիրի հետ» ֆիլմի ցուցադրությունը զուգադիպեց Իսրայելի պետության 60-ամյակի տոնակատարություններին: «Դա պատահական զուգադիպություն է: Մենք չէինք ծրագրել ֆիլմը ցուցադրել ինչ-ինչ տոնական իրադարձությունների առթիվ», ասել է Ֆոլմանը:

Մասնագետները նշում են, որ նրա ֆիլմը վավերագրական կինոյում սկիզբ է դնում մի նոր ուղղության: Այն պատմվածքում է հարցազրույցներ 9 զինվորականների եւ հոգեբանների հետ: Բայց դա արված է վավերագրական ֆիլմի ավանդական շրջանակներից դուրս գալու եւ լայն ընդհանրացումներ անելու նպատակով: Ֆոլմանը կինոխցիկով նկարահանած նյութը վերածել է մուլտֆիլմի: «Դա ինձ տվեց ստեղծագործական որոնումների ազատություն, ինչպես նաեւ իրական կյանքի փաստերն իմ հերոսների աշխարհընկալման հետ համեմատելու հնարավորություն», պատմել է բեմադրիչը: Քննադատների կարծիքով, նրան հաջողվել է վավերագրական կինեմատոգրաֆը բարձրացնել գեղարվեստական եւ պատկերային նոր մակարդակի:

Պատրաստեց Պ. ԲԵՐԲԵՐՅԱՆԸ

ԿԻՆՈԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍԸ ՀԱՍԿԱՊԵՍ ԶԳՈՒՄ Է «ՈՍԿԵ ԾԻՐԱՆԸ»

ՄԻՐԱՆՈՒՅՇ ԳԱԼՍՏՅԱՆ

Վերջին տարիների ամաչխարհային կինոզարգացումներին եւ փառատոները լուսաբանելու պոկսիկիային լրագրողներին ծանոթացնելու նպատակով «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնն ու Հայաստանի կինոգետների եւ կինոլրագրողների ասոցիացիան մայիսի 9-11-ը Ծաղկաձորում անցկացրեցին ժամանակակից կինոմենեջմենտության առանձնահատկություններին ու խնդիրներին նվիրված ճնշարկում, մասնակցությամբ Մոսկվայի մշակութային հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, արվեստաբանության դոկտոր, պրոֆեսոր Կիրիլ Ռազլոգովի, որը մեր կինոսիրող հասարակությանը ծանոթ է իր-րեւ «Կույս կինո» հայրրաբարի հեղինակ եւ վարող: Քննարկման ժամանակ կինոլրագրության վերաբերյալ իրենց

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆՆ» ավելի առաջ կգնա, եթե բոլորս լինենք նրա մի մասնիկը

Ասում է պրոֆ. Անետա Երզնկյանը

- Տկն Երզնկյան, ձեր կարծիքով, ո՞րն է կինոլրագրողներ պատրաստելու եւ կինոլրագրությունը մեզանում պատշաճ մակարդակի հասցնելու նախապայմանը:

- Կախ ասեմ, որ իրոք, կինոլրագրության խնդիր ունենք եւ մշակում ենք այդ բացը լրացնելու մասին: Եթե նախկինում մեր ինստիտուտը պատրաստում էր միայն տեսաբաններ, հիմա նաեւ ճնշադասներ, լրագրողներ: Խորհրդային տարիներին մեզանում կար անալոգ կինոմենեջմենտություն, երբեմն մտածում եմ, որ գուցե հիմա պահանջարկ չկա՞, բայց մյուս կողմից արդեն 5 տարի անցկացվում է «Ոսկե ծիրան» կինոփառատոնը, որի կողքին ավելանում են երիտասարդական, մանկական եւ այլ ֆիլմերի փառատոներ: Դա որոշակիորեն նպաստում է կինոլրագրությանը եւ, կարծում եմ, առաջիկա տարիներին դա անհրաժեշտ կլինի: Կինոլրագրողների պակասը զգացվում է հատկապես փառատոնի ժամանակ եւ ահա հենց «Ոսկե ծիրանն» էլ փորձում է լրացնել այդ բացը: Մեր լրագրողները հիմնականում գրում են տարբեր թեմաների մասին, իսկ կինոն մյուս արվեստների պես պահանջում է կինոյի պատմություն խոր իմացություն, հայկական եւ համաշխարհային կինոզարգացումներին հետեւելու հմտություն եւ այլն: Ծաղկաձորյան ճնշարկման ժամանակ հաստատվեցի, որ ոչ բոլոր լրագրողներն են պատրաստ դրան, թեպետ կարծում եմ, որ նրանք ավելի հմուտ կլինեն կինոփառատոնի ժամանակ: Պետք է ավելի խորացնել շփումները կինոմենեջմենտների ասոցիացիայի հետ, օգնել խորությամբ ըմբռնելու կինոզարգացումները: Եթե այդպիսի ըմբռնում լինի, անպայման ասպարեզ կգան մարդիկ, որոնք կգրեն կինոյի մասին, թերթերում կունենան առանձին սյունակներ եւ այդպես կկարողանան որոշակի մասնակցություն ունենալ ու հետզհետե ուղեցույց դառնալ հանդիսատեսի համար: Խմբագրությունները պետք է այդ մասին մտածեն, որովհետեւ փառատոները մենակ ոչինչ չեն կարող անել, պետք է ունենալ հմուտ լրագրողներ, որոնք իրոք կկարողանան լուսաբանել տեղի ունեցող ամեն մի իրադարձություն:

- «Ոսկե ծիրանը» առաջիկայում կունենա կինոլրագրության եւս մեկ սեմինար, այս անգամ տարածաշրջանային, որին մասնակցող լրագրողները պետք է թղթակցեն փառատոնի օրերին լույս տեսնող թերթին: Ի՞նչ եք կարծում, կհաջողվի մեկ շաբաթվա ընթացքում ստեղծել պրոֆեսիոնալ թիմ:

- Շատ լավ է, որ «Ոսկե ծիրանն» այս տարի ունենալու է իր առանձին թերթը: Փառատոնային թերթերի համար ամենակարեւորը փառատոնի զարկերակը պահելն է, հենց դրանով է այն գրավիչ: Չպետք է մտածել, որ այդ թերթը պետք է լինի շատ խորը վերլուծական հոդվածներով հագեցած, դրանք թող լինեն մյուս թերթերում,-կամ կինոամսագրերում: Փառատոնային թերթը չպետք է հավակնի լուրջ ընդհանրացումների: Ավելի շատ պետք է բռնիկոն լինի, հիարկե 1-2 լուրջ հոդվածներով: Ինձ թվում է, այդ ֆորմատով մեր լրագրողները կկարողանան ազատել, առավել եւս սեմինարից հետո: Հավանաբար ձիրս կլիներ երկխոսության համար ժամանակ տալ, պարզել, թե ինչ մակարդակի են հասել, ինչ ծանոթարհով են գնում: Ծաղկաձորյան ճնշարկմանը մասնակցած լրագրողների հարցերից շատ լավ երեւում էր, թե ովքեր ավելի ազատ կազատվեն: Ամենակարեւորն, ըստ իս, այն է, որ մասնակիցները պատրաստ լինեն վերցնելու այն ամենը, ինչ տրվում է իրենց, մանավանդ որ կազմակերպիչները հրավիրում են հայտնի կինոգետների: Կարիք Ռազլոգովը մասնակցությունն առդեն իսկ երեւույթ էր մեզ համար: Եթե լրագրողների հետ փոխադարձ կապը չկայանա, շատ փոսոտ կլինի եւ արդյունքում չենք ունենա այն, ինչ ուզում ենք: Լրագրողները ոչ թե պետք է մտածեն, թե իրենց սպասելիքներն ավելին էին, այլ պետք է յուրացնեն իրենց մատուցած նյութն ու փորձեն առաջ գնալ: Այս սեմինարը ցույց տվեց, որ որոշող, մի փոքր էլ դժգոհ դեմքեր կան: Երբի դժգոհ լինելը ինչ-որ տեղ ձիրս է, առաջ գնալու համար պետք է մի փոքր դժգոհ լինել:

Հունիսին կայանալիք դասընթացներին մեր ուսանողներից մասնակցելու են 4 հոգի, որոնք ցիրաթերթին, իհարկե, ոչ շատ բարձր մակարդակով: Անկեղծ ասած, ես մեծ սպասելիքներ ունեմ, որովհետեւ եւս մեկ բայլ ենք անում: Ասում եմ մեծ, որովհետեւ ինձ չեմ տարանջատում «Ոսկե ծիրան» կինոփառատոնից, դա խոսոր երեւույթ է մեր կյանքում եւ բոլորս դրա մի մասնիկն ենք: Եթե մեզանից յուրաքանչյուրն այդ զգացումն ունենա, գործն ավելի առաջ կգնա:

ՌՈՒԲԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

խոսքն ասացին նաեւ փառատոնի նախագահ Հարություն Խաչատրյանը, գեղարվեստական տնօրեն Սուսաննա Հարությունյանը, Հայաստանի գրողների միության քարտուղար, կինոգետ, պրոֆ Դավիթ Մուրադյանը, «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիսյանը: Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի պրոռեկտոր, կինոգետ, պրոֆ. Անետա Երզնկյանը: Լրագրողների համար անցկացվեցին նաեւ կինոդասընթացներ, ցուցադրվեցին մի շարք փառատոներում վերջերս ցուցադրված ֆիլմեր:

Արդեն 5 տարի ունենք միջազգային կինոփառատոն, չունենք պրոֆեսիոնալ կինոլրագրություն՝ սա կարեւոր «Ոսկե ծիրանի» գոյության ընթացքում ակնհայտ դարձած փաստ է: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ փառատոնը լուսաբանող հոդվածները հիմնականում լրատվական են, զուտ իրադարձային, իսկ գեղարվեստական գնահատականներով հանդես եկող մեկ-երկու կինոքննադատի գրած հոդվածները գրեթե աննկատ են մնում թերթերի այն առատության մեջ, որ ունենք այսօր:

Ինչ վերաբերում է փառատոնին, ապա նա կարեւորագույն մասը, վերջին-վերջո, ոչ թե բացումն ու փակումն են, այլեւ այդ օրերին ներկայացվող կինոծրագիրը: Կինոփառատոնի գլխավոր գործառույթն է ներկայացնել այն, ինչը չի ցուցադրվում վարձույթում, հանդիսատեսին բացառիկ հնարավորություն ընձեռել ծանոթանալու կինոմշակույթի առի դրսեւորումներին: Եվ կարեւոր է, որ ավելի շատ խոսվի, գրվի ֆիլմերի արժանիքների մասին, որոնցի հանդիսատեսն իմանա, թե ինչպիսի՞ ընտրություն անի միաժամանակ տարբեր դահլիճներում ցուցադրվող կինոնկարների միջեւ, իսկ փառատոնի ավարտին նրա համար հասկանալի լինի նաեւ, թե ինչո՞ւ այս կամ այն ֆիլմի հեղինակներն են արժանանում մրցանակների:

Միջազգային կինոփառատոնների շրջանակներում, նրանց մեկնարկից առաջ անց է կացվում ճնշադասության շաբաթ: Այսինքն՝ կինոքննադասներն ու լրագրողները հանդիսականներից շուտ են դիտում ֆիլմերը եւ գրում նրանց մասին: Մշակութային ընկերակցությունը, որքան էլ որ կորցրել է իր մենաշնորհային ազդեցությունը կինոգործընթացի վրա՝ արտադրանքի գեղարվեստական որակի իմաստով, այդուհանդերձ, Ա կարգի կինոփառատոներում (իսկ դրանց թիվն աշխարհում 10-ից միայն է) առաջնայինը մամուլի ներկայացուցիչների (եւ ոչ թե «աստղերի») հարցն է, որովհետեւ նրանք են փառատոնի մասին գրելու, խոսելու իրենց երկրներում: Այսօր աշխարհում մոտ 300 հեղինակավոր կինոքննադաս եւ կինոլրագրող կա, որոնք որոշում են, թե «ինչն է լավ եւ ինչը՝ վատ»: Ավելին, նրանց գնահատականը հաճախ ազդում է ֆիլմերի կոմերցիոն ճակատագրի վրա: Իսկ «կոմերցիան» կինոյի մշակման ուղեկիցն է, ուզենք, թե՝ ոչ. կինոն եւ շուկան անբաժան են, մանավանդ այսօր: Այդպես, Կաննի կինոփառատոնը, որ աշխարհում ամենահեղինակավոր, ամենազդեցիկ փառատոներից է, նույնպես միավորում է կինոն եւ շուկան: Այս փառատոնից հետո ամենազդեցիկը Տորոնտոյի կինոփառատոնն է, որն ավելի շատ շուկա է, քան կինոփառատոն եւ նույնիսկ չունի մրցութային բնագիր: Բավականին ազդեցիկներից է Պուսանի (Կորեա) կինոփառատոնը, Բեռլինալեն համեմատաբար երիտասարդ է (հիմնադրվել է 1950թ.) եւ խաղահակնացված կինոփառատոն է, վերջին ժամանակներս ամրապնդել է իր կարգը բուն գերմանական կինեմատոգրաֆի թեմ: Առավել գեղագիտական կողմնորոշում ունեցող, այսպես կոչված՝ «էսթես» փառատոնի համբավ ունի Վենետիկի կինոփառատոնը, իսկ Ռոտերդամինը, օրինակ, առավել՝ ավանգարդ կինոյի փառատոն է, շատ համարձակ է, չի վախենում սենսացիաներից, հայտնագործություններից:

Ինչ վերաբերում է Ա կարգի կինոփառատոն հասկացությանը, ապա նրա սահմանման մեջ որոշակիություն մտցնելով, ասենք, որ այդ կարգին պատկանելու համար նախ՝ երկիրը պետք է ունենա մեծ կինոարտադրություն, եւ մյուս պայմանն այն է, որ այդ կինոարտադրությունը պետք է առատության նեղի, այլ ոչ թե դրսի պրոդյուսերների օգնությամբ եւ աջակցությամբ: Այնպես որ, պիտի հասկ պատկերացնենք այն պատճառները, թե ինչո՞ւ օրինակ՝ «Ոսկե ծիրանը» չի կարող հավակնել Ա կարգի կինոփառատոն լինելուն: Եւ խնդիրը բնավ այն մանրուքները չեն, որ սիրում են տեսնել մեր հայրենակիցներից ոմանք, այլ այն, որ մենք չունենք եւ հազիվ թե երբեւէ ունենանք մեծ կինոարտադրություն... Թեեւ, ոչ գիտի:

Կիրիլ Ռազլոգովը «Ոսկե ծիրանի» մասին

«Փառատոնն իրեն միանգամից դրսեւորում է որպես միջազգային, նրա՝ աշխարհում ունեցած համբավը հնարավոր է նույնիսկ ավելի բարձր է, քան Հայաստանում: Պատճառն այն է, որ այն արագ է ընդունում այն երեւույթները, որոնք ծնվում են միջազգային փառատոնային շարժման մեջ»:

«Փառատոնի կազմակերպիչները փորձում են դուրս գալ ազգային շրջանակից, գնում են դժվար ուղղությամբ, ինչպես օրինակ հայ-թուրքական ճնշարկումները, որ վերջերս անցկացվեցին Սամբուլում: Փառատոնը չի վախենում սուր հարցեր բարձրացնելուց ու բավական ճկուն արձագանքում է այն ամենին, ինչ կատարվում է: Հենց դա նկատի ունենալով կարելի է վստահաբար ասել, որ այն կշարունակի հայել ճիշտ ուղղությամբ: «Ոսկե ծիրանը» հնարավորություն ունի դառնալու տարածաշրջանի առաջատար կինոփառատոնը. Հանի որ հարեւան երկրներն այդքան էլ հայտնի չեն իրենց կինեմատոգրաֆիայով կամ եղել են, բայց այժմ կորցրել այդ հեղինակությունը»:

«Գեղանկարիչն իր մտքում եղած ֆիլմը բեմադրում է մեկ պատկերում»

Ասում է Վրեժ Քասունին

Վրեժ Քասունին Սիրիայից Հայաստան եկավ 1999-ին՝ մշակույթի նախարարության հրավերով մասնակցելու ծաղրանկարիչների ցուցահանդեսին եւ հենց դա էլ առիթ դարձավ մնալու գեղանկարչական կրթություն ստանալու եւ փորձառություն ձեռք բերելու մասին: Ավարտեց Փ. Թեղեմեզյանի անվ. գեղարվեստի ուսումնարանը, տարվեց իր երազած անիմացիայի աշխարհով եւ մոտ 8 տարի մուլտիպլիկացիայում աշխատելուց նկարահանեց իր առաջին կարճամետրաժ ֆիլմը՝ «Սեր կամ ...», որն օրեր առաջ ցուցադրվեց Կաննի միջազգային փառատոնի արտամրցութային ծրագրերից մեկում: «Ես միշտ ասել եմ, որ գեղանկարիչը նաեւ բեմադրիչ է, իր մտում եղած ֆիլմը նա բեմադրում է ընդամենը՝ մեկ պատկերում: Հալեցրած խանդակներ էի անում, գրում էի փոքր սցենարներ, պատմվածքներ, սակայն երբեմ չէի մտածում հասարակելու մասին: Ֆիլմ նկարահանելու ցանկություն ունեցա Հարավային Կովկասի անկախ կինոգործիչների միության կազմակերպած դասընթացներին մասնակցելուց հետո: Ուզղակի որոշեցի փորձել կատարությունները, որեւէ փառատոնի ուղարկելու նպատակ չունեի: Ֆիլմը չկայացած սիրո պատմություն է այն մասին, որ մեր կյանքում առիթներ են ունենում մեծ սեր ունենալու, բայց մեր իսկ ձեռքով կորցնում ենք: Նաեւ այն մասին է, որ սերը հավասարազոր է կյանքին, եթե կորցնում ես սերը, կորցնում ես նաեւ կյանքը, իհարկե, ոչ ֆիզիկապես, պարզապես դառնում ես սպեր եւ ապրում աննկատ: Այսինքն՝ սեր կամ ոչինչ: Օրթաստոր Հակոբ Կարամֆիլյանի հետ ֆիլմը նկարահանեցինք ընդամենը 3 օրում, ընտրեցինք ոչ պրոֆեսիոնալ դերասանների, որոնցից մեկը Անուշ Եզեգելյանն է», պատմում է Վրեժ Քասունին:

Ֆիլմին ստեղծմանը աջակցել է «Ազգ» ստուդիայի հետ դեկավար Հայկ Հարությունյանը, տրամադրելով կինոխցիկ եւ նկարահանման համար անհրաժեշտ բոլոր պարագաները: Կաննի կինոփառատոն ուղարկելուց առաջ Քասունին ֆիլմը ցուցադրեց Դուբայի փառատոնում, մասնակցելով անկախ պրոդյուսերների համար անցկացված դասընթացներին: «Ֆիլմը հավանության արժանացավ, բայց խորհուրդ տվեցին մի քանի օպտումներ անել: Ոգեւորվեցի եւ սկսեցի աշխատել մոնտաժի եւ բեմադրության վրա: Քանի որ ֆիլմում երկխոսություն չկա, բեմադրությունը չափազանց կարեւոր էր: Թավշոթակահար Արսյոմ Մանուկյանն այդ աշխատանքը հրաշալի կատարեց ֆիլմի կադրերը դիտելով եւ հենց տեղում իմպրովիզացիա անելով: Ֆիլմն ավարտելուց հետո ցուցադրեցի կինոկենտրոնի տնօրեն Գեւորգ Գետրգյանին, որ ինձ ոգեւորություն մերձենեց իր խորհուրդներով ու խոստացավ աջակցել ֆիլմը տարբեր փառատոներ ուղարկելով: Մարտի վերջին ֆիլմն ուղարկեցի Կաննի կինոփառատոնի «Կարճամետրաժ ֆիլմանկյուն» արտամրցութային ծրագիր: Ծիծաղելին այն է, որ ուղարկելուց հետո գրեթե մոռացել էի, երբեմն մտածում էի, թե որեւէ ծրագրում չի ընդգրկվել: Կաննից ստացել եմ մի քանի հազար էլեկտրոնային նամակ, գրում են, որ գեղեցիկ եւ էմոցիոնալ ֆիլմ է: Անչափ ոգեւորված եմ եւ արդեն իսկ մտածում եմ ֆիլմի մյուս 2 մասերը նկարահանելու մասին: Շատ եմ ցավում, որ վիզայի ուշացման պատճառով չկարողացա գնալ»:

Կաննի ծրագրում ընդգրկված մյուս բոլոր ֆիլմերի պես Քասունու ֆիլմը եւս կցուցադրվի «Ոսկե ծիրան» 5-րդ կինոփառատոնում: «Սեր կամ ...» ֆիլմը կընդգրկվի «Հայկական համայնապատկեր» ծրագրում:

ՌՈՒԲԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ֆրանսիական կինոյի այսօրվա դեմքերը

Ֆրանսիական կինոն իր յուրահատուկ դրսեւորումներով միշտ էլ առանձնացել է ամերիկյան կամ արեւմտյան այլ երկրների կինեմատոգրաֆիական նվաճումներից: Լինելով կինոյի ստեղծման օրանը, Ֆրանսիան ափսարին տվել է տաղանդավոր, բազմաժանր եւ լայն ամպլիայի տեր դերասանների մի ամբողջ բանակ՝ սկսած Ֆերնանդելից, Գաբենից, Դարյոյից, Մորգանից, Մարեից, Ֆիլիպից, Բուտիլից, վերջացրած Տրենտինյանով, Դելոնով, Բորդոյով, Դենյովով, Ժիրարդոյով եւ առավել ուշ շրջանի՝ Դեպարդիոյով, Ռիշարով, Ռենոյով: Իսկ ովքե՞ր են ֆրանսիական կինոյի այսօրվա՝ նոր դեմքերը, որոնք շարունակողները պիտի լինեն նախորդների ավանդույթների: Ֆրանսիայի արտաքին եւ եվրոպական գործերի նախարարության «Լաբել Ֆրանս» միջազգային լրատվության ոլորտների այս տարվա առաջին եռամսյակի համարը (N 69) ներկայացնում է նրանցից մի քանիսին:

Մելանի Տիերի. Շիկահեր հրեշակը

Երեխայի անմիջականությամբ աչի ընկնող 26-ամյա այս նախկին մոդելն իրեն էաս շուտ հաստատեց մեծ էկրանում, խաղալով Վիկտոր Հյուգոյի կոթողային վեպի չափազանց ազատ մեկնաբանությունը համարվող «Փարիզի Քվազիմոդոն» 1999թ., կատակերգության մեջ: 2006-ին թատերական բնագավառում արվեստաբան-ենթադատների բարձր գնահատականին արժանացած գեղգայուն դերասանուհին Ներկայումս նկարահանվում է Մեթյու Կասովիցի («Ատելություն» եւ «Մեր օրերի Բաբելոնը» ֆիլմերի ռեժիսորը) բավական հանդուգն գիտաֆանտաստիկ ֆիլմում՝ Ժերար Դեպարդյոյի, Լամբերտ Ուիլսոնի եւ Շառլոտ Ռամպլինգի ընկերակցությամբ:

Էլոդի Բուշե. Ֆրանսիական կինոյի մեծ հույսը

90-ականներին հայտնաբերված 34-ամյա այս դերասանուհին սիրում է ռիսկի դիմել եւ ոչտրաստ է ամբողջովին նվիրվել իր կերպարներին: Հրաբալի մարմնավորումներով հանդես է եկել Անդրե Տեշինեյի «Վայրի երեգ» (1994 թ.) եւ Սեդրիկ Կլապիշի «Վաղահաս վտանգ» (1995 թ.) ֆիլմերում, իսկ 1998-ին Կաննի փառատոնում արժանացել է «լավագույն դերակատարուհի» մրցանակին՝ Էրիկ Զոնկայի «Հրեշակների երազային կյանքը» ֆիլմում հասարակությունից մերժված կնոջը մարմնավորելու համար: Հիմա ժամանակի մեծ մասն անցկացնում է Փարիզում եւ Լոս Անջելեսում՝ նկարահանվելով Ժան-Մարկ Բարի «Too Much Flesh», Ժան Դյուժարդենի «Brice de Nice» եւ «The L World, Alias» ամերիկյան սերիալներում: Անցած տարի մի շարք երկրորդական դերերով հանդես է եկել ֆրանսիական կինոկատակերգություններում: Շուտով կհայտնվի Էրիկ Ժյուտրի եւ Ռամզի Բեդիայի «Միայն երկուսը» ֆիլմում:

Սիսա Մաիգա. Արհայաղաստեր վստահությամբ դերասանուհին

Մալիա-սենեգալյան արմատներով 33-ամյա այս դերասանուհին առաջին անգամ հանդիսատեսի եւ արվեստագետների ուշադրությունը գրավեց Սեդրիկ Կլապիշի «Ռուսական տիկնիկները» ֆիլմում իր դերակատարմամբ: Դա «Իսլամական ոչնչով» կամ «Եվրոտունիզ» ֆիլմի շարունակությունն էր: Իր թարմությամբ ու հասունությամբ նա գրավում է այնպիսի ռեժիսորների, ինչպես Միշել Հանեքեն («Ջոլարկվածը» 2005 թ.), Աբդելռահման Սիսակոն («Բանակ» 2006 թ.) եւ Կլոդ Բերրին («Մեկը մնում է, մյուսը՝ մեկնում» 2005 թ.): Հանդես է եկել նաեւ 2006-ին էկրան բարձրացած «Փարիզ, ես քեզ սիրում եմ» ֆիլմում: Որպես «ամենախոստումնալից դերասանուհի» 2007-ին Սեզարի թեկնածու առաջադրված Սիսան իրեն լավ է զգում նաեւ կատակերգական ֆիլմերում, ինչպես օրինակ Ռոմեն Դյուրիի «Մարդու տարիք» ֆիլմում: Այս տարի որպես բեմադրիչ նա կնկարահանի իր առաջին՝ «Մենք պետք է հեռանանք Բամակոյից» վերնագրով ֆիլմը:

Ժյուլի Դեպարդյո. Հոր հետքերով, բայց ինքնահաստատման վճռականությամբ

Ֆրանսիական կինոյի ամենաժողովրդական դերասանի դուստրն իր տաղանդի շնորհիվ արդեն իսկ ինքնուրույն տեղ է գրավել ֆրանսիացի կինոհանդիսատեսի սրտում: Իվ Անժելոյի «Գնդասեղ Շաբերը» ֆիլմում (1994թ) հոր կողքին հանդես գալուց հետո իր մի շարք անսովոր եւ անբռնազբոս դերերով նա դարձել է փնտրված դերասանուհի: 2004-ին 2 Սեզար մրցանակ է վաստակել (որպես երկրորդական դերի լավագույն կատարման եւ ամենախոստումնալից դերասանուհի) Կլոդ Միլերի «Փորիկ Լիլին» ֆիլմում դերակատարման համար: 2007-ին մեծ տպավորություն գործեց Անդրե Տեշինեյի «Վկաները» ֆիլմում նրա խաղացած դերը: Սոֆիի բռնկման մասին պատմող այս ֆիլմում Ժյուլիի խաղընկերներն են Սամի Բուաժիլան, Միշել Բլանկը եւ Էմանուել Բեարը:

34-ամյա Ժյուլին այժմ նկարահանվում է

Կլոդ Միլերի «Գաղտնիքը» ֆիլմում՝ Սեսիլ դը Ֆրանսի եւ Պատրիկ Բրուելի կողքին, այնուհետեւ կստանձնի դիմադրության շարժման մարտիկներից մեկի դերը՝ Ժան-Պոլ Սալոնեի «Կին գործակալները» ֆիլմում, Սոֆի Մարսոյի եւ Մարի Ժիլենի ընկերակցությամբ:

Ժերար Մելիի. Առնականության երաշխավորը

Երբեմն կասկածելի, երբեմն խրախուսող, վստահություն ներշնչող, բայց միշտ առեղծվածային 49-ամյա այս դերասանը վերջին շրջանում մեկը մյուսի հետեւից ստանձնում է հյուսիսային աֆրիկացու գունեղ դերեր: Դա սկսվեց այն բանից հետո, երբ հաջողությամբ հանդես եկավ Թոմաս Ժիլուի «Կհամարձակվեմ խաբել քեզ» (1996 թ.) ֆիլմում: Դանդաղ, բայց հաստատուն քայլերով նա իր տեղն է գտավ ֆրանսիական կինոյում:

Երկու անգամ եղել է Քեթրին Դենյուվի խաղընկերը: Մեկը Թոնի Մարշալի «Դախտին ամենամոտիկ վայրում» (2002 թ.), մյուսը՝ Անդրե Տեշինեյի «Փոփոխվող ժամանակները» (2004 թ.) ֆիլմերում: 2007-ին բարձր գնահատականի է արժանացել Միշել Սոֆինոզայի «Աննա Մ.» ֆիլմում ստանձնած հոգեբույժի դերի համար: Հիմա ոչտրաստվում է նկարահանվել 2 նոր ֆիլմերում:

Գասպար Ուլիել. խարտյաշ սիրունատեսը

Առաջին դերակատարումը Միշել Բլանկի «Համբուրեք ում ուզում եք» 2002 թ. կատակերգությունում էր: Այնուհետեւ կինոհանդիսատեսը նրան նկատեց Անդրե Տեշինեյի «Մոլորվածները» ֆիլմում՝ էմանուել Բեարի կողքին, որից հետո նա շտապելիք բարձրանում է փառքի ասպիճաններով: Հրեշակային կամ կանացի գեղեցկությամբ 23-ամյա այս սիրուհատես երիտասարդը որպես «ամենախոստումնալից դերասան» 2005-ին արժանացավ Սեզար մրցանակի՝ Ժան-Պիեռ Ժյունեի «Երկար նշանադրություն» ֆիլմում Օդրի Տոտուի հետ իր դերակատարման համար: 2006-ին երեւաց «Փարիզ, ես քեզ սիրում եմ» ֆիլմի համար ամերիկացի Գաս վան Սանտի ոչտրաստած համառոտ սկետչում: Ներկայումս նկարահանվում է Նոր Զելանդիայում Նիկի Կարոյի «Գինեգործի բախտը» ֆիլմում:

Մալիք Զիդի. Խոցելին եւ առեղծվածայինը

Ալժիրցի հոր եւ ֆրանսիացի մոր զավակին առաջինը նկատեց «8 կանայք» ֆիլմի ռեժիսոր Ֆրանսուա Օզոնը՝ 2002-ին: Նա Մալիքին առաջարկեց ստանձնել իր առաջին դերը՝ Ֆասբինդերի պիեսի մոտիվներով էկրանավորված «Ցրի կաթիլներ՝ Այրվող ժայռերի վրա» ֆիլմում: Այդ դերակատարման համար դերասանը որպես «ամենախոստումնալից դերակատար» առաջադրվեց Սեզարի մրցանակի:

32-ամյա դերասանը հավատարիմ է մնում իր ընտրած մասնագիտությանը եւ հատկապես ռեժիսոր Անդրե Տեշինեին: Խաղացել է «Գյուղացի Ջոնին» ֆիլմում (2006 թ.), լավագույն դերակատարման համար 2007-ին ստացել է Սեզար մրցանակ: Այժմ ոչտրաստվում է Միշել Ժոնասի ընկերակցությամբ հանդես գալ Պիեռ Բերեշի «Ամոնություն որդու հետ» ֆիլմում:

Լուի Գառել. Տարօրինակ խեղկատակը

Դերասանների ընտանիքում ծնված Լուին ռեժիսոր Ֆիլիպ Գառելի որդին է, նա առաջին անգամ կինոէնթադատների ուշադրությանն արժանացավ 2003-ին՝ իտալացի հանրաճանաչ ռեժիսոր Բերնարդո Բերտոլուչիի «Երազողները» ֆիլմում ստանձնած դերի համար: Նրա խաղընկերներն էին Էվա Գրինը եւ Մեթ Փիքը: Այնուհետեւ նա Սեզար մրցանակի արժանացավ իր հոր՝ Ֆիլիպ Գառելի «Մշտական սիրահարները» 2005թ. ֆիլմում դերակատարման համար:

24-ամյա դերասանը միաժամանակ լուրջ է եւ ծիծաղելի, մի ֆիչ խենթ, մի փոքր տարօրինակ, երբեմն ոռմանտիկ, երբեմն էլ՝ կատաղած: Նրան նմանեցնում են իր ուսուցչին՝ Ժան-Պիեռ Լեոյին: Իր մի քանի սատանայական դերերից հետո նա 2007-ին հանդիսատեսին մեծապես հուզեց Ջրիստոֆ Օնորեյի «Սիրո երգեր» երաժշտական կատակերգությունում ստանձնած դերով:

Այժմ նկարահանվում է Ռաուլ Ռուիզի «Գիշերվա զգացումը» ֆիլմում, որտեղ նրա խաղընկերն է Ասիա Արժենտոն:

Թարգմ. Հ. ԴՈՒՆԼԻՄՅԱՆ

Իսրայելի նպատակը Գոլանի բարձունքները վերադարձնելը չէ

Այլ վերադարձնելու պատրաստակամությամբ Սիրիա-Իրան առանցքի չեզոքացումը

Հորդանանի, Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի ոչ երկրները, տուրֆ տալով պաշտոնական Վաշինգտոնի քաղաքական նկրտումներին, ներգրավվեցին ԱՄՆ-ի տարածաշրջանային ծրագրերում: Նրանց ներգրավումը փաստացի սահմանափակեց արաբա-իսրայելական հակամարտության աշխարհագրությունը, ինչի հետեւանքով դա հետզհետե հանգեց պաղեստինա-իսրայելական հակամարտության: Թեեւ վերոհիշյալ երկրները չդադարեցին հակամարտող կողմ համարվել, սակայն նրանց այդ կարգավիճակով մասնակցությունը հակամարտության, սացավ ձեւական բնույթ:

Սակայն արաբա-իսրայելական հակամարտության սահմանափակումը պաղեստինա-իսրայելականով չհանգեցրեց արաբական երկրների հետ Իսրայելի հակասությունների հաղթահարման: Դրանք Հորդանանի, Սաուդյան Արաբիայի եւ Եգիպտոսի պարագայում ընդամենը սառեցվեցին, իսկ Սիրիայի՝ էլ ավելի սրվեցին: Քանի որ արման գլխավոր պաշտաոը Իրանի հետ Սիրիայի ռազմաքաղաքական սերտ համագործակցությունն էր, իսկ տարածաշրջանում Իսրայելի շահերով առաջնորդվող ԱՄՆ-ն այս երկու պետություններին պահում է ռազմական ներխուժման ծնշական սպառնալիքի տակ, ուստի տարածաշրջանում առաջացան նոր հակասություններ ոչ արաբական պետությունների ընդգրկումով:

Թեեւս նոր հակասությունների տեսանկյունից պետք է մոտենալ Սիրիա-Իսրայել գաղտնի բանակցություններին, որոնք Թուրքիայի միջնորդությամբ անցկացվել են Սամբուլում: Չնայած բանակցությունների սկզբնավորման մասին կողմերը պաշտոնապես հայտարարել են մայիսի 21-ին, սակայն դրանք սկսվել են մայիսի 19-ին: Բանակցություններում Սիրիայի պատվիրակությանը գլխավորել է արտգործնախարարի խորհրդական Ռիյադ Դավուդին, իսրայելականին՝ վարչապետ Եհուդ Օլմերտի դիվանապետ Յոսեֆ Սիսիրոկը: Գաղտնիության հանգամանքը մեզ զրկում է բանակցությունների մանրամասներին անդրադառնալու հնարավորությունից: Այս պայմաններում անհամեմատ մեծանում է բանակցություններում կողմերի առաջադրանքի, դրա մասին նրանց հայտարարությունների բովանդակության, ինչպես նաեւ բանակցություններին շահագրգիռ երկրների եւ ատաշեի առաջնակարգ լրատվամիջոցների արձագանքների նշանակությունը:

Բանակցություններին սիրիական կողմը մասնակցում է Գոլանի բարձունքները իսրայելական օկուպացիայից ազատելու հեռահար նպատակով: Իսկ Իսրայելը պահանջում է, որ Դամասկոսը խզի կապերը «Համասի» եւ «Հզբոլլահի» հետ, միաժամանակ վերջ տա Իրանի հետ ռազմաքաղաքական համագործակցությանը: Համենայն դեպս, մայիսի 15-ին Իսրայելի կազմավորման 60-րդ տարեդարձին մասնակցելիս, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը դիմել էր Թուրքիային, հանդուրժելու Սիրիային, որ վերջինը դադարեցնի «Հզբոլլահին» ցուցաբերվող աջակցությունը: Իսկ մայիսի 20-ին երուսաղեմում Իսրայելի վարչապետ Օլմերտը ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիից պահանջել էր Իրանը երջափակել ծովից: Հաջորդ օրը դրան էին հետեւել գաղտնի բանակցությունների մասին Իսրայելի վարչապետի գրասենյակի եւ Սիրիայի արտգործնախարարության միաժամանակյա հայտարարությունները. «Իսրայելն ու Սիրիան Թուրքիայի հովանու ներքո միջնորդավորված բանակցություններ են սկսել: Կողմերը բանակցություններում բարի կամքի դրսեւորման պատասխանատվությամբ որոշել են համապարփակ խաղաղության հասնելու ուղղությամբ քայլեր գործադրել: Կողմերից յուրաքանչյուրը բանակցային գործընթացում սանձնված դերի եւ հյուրընկալության համար շնորհակալություն է հայտնել Թուրքիային եւ նրա վարչապետ Էրդողանին»:

Վարչապետ Էրդողանին շնորհակալություն է հայտնել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Գի Մունը, իսկ պաշտոնական Վաշինգտոնն ու ԵՄ-ը գոհունակությամբ են արձանագրել Թուրքիայի միջնորդությունը Սիրիա-Իսրայել բանակցություններում: Մինչ Անկարան այդ միջնորդությունը որակում էր դիվանագիտական հաղթանակ, Սիրիայի արտգործնախարար Վալիդ Մուալլիմը մայիսի 21-ին հայտարարում է, որ Իսրայելը Գոլանի բարձունքներն ազատելու պատասխանատվություն է ստանձնել: Հաջորդ օրը նրան է արձագանքում Իսրայելի արտգործնախարար Զիպի Լիվնին, ասելով. «Եթե Սիրիան Իսրայելի հետ հաշտություն է ուզում, արա պետք է հեռու մնա Իրանից եւ կատրը խզի «Հզբոլլահի», «Համասի» պես կազմակերպությունների հետ»: Քանի որ քաղաքական անկախ դիտորդների կարծիքով, Գոլանի դիմաց Սիրիան էլ պատրաստվել էր կատարել Իսրայելի պահանջները, ուստի բանակցությունները հաշտության հույսեր էին ներշնչում:

Սակայն Իսրայելի վարչապետ Օլմերտի մայիսի 23-ի հայտարարությունը. «Սիրիային ոչինչ չենք խոստացել», գերազանցեց բոլոր ենթադրությունները: Այսպիսով, կասկածի տակ դրվեց Սիրիա-Իսրայել բանակցությունների նպատակահարմարությունը: Մինչդեռ դրանց ծավալման դեպքում, Թուրքիան որպես միջնորդ, առանցքային դիրքեր էր գրավելու տարածաշրջանում, Իրանը, կորցնելով Սիրիայի պես գլխավոր դաշնակցին, դատապարտվելու էր մեկուսացման, Լիբանանում «Հզբոլլահը» զրկվելու էր Սիրիայի աջակցությունից, առանց որի Իրանը դժվարանալու էր «Հզբոլլահին» անհրաժեշտ օգնությունը ցույց տալու հարցում: ԱՄՆ ու Իսրայելը Իրանին տարածաշրջանի երկրների աջակցությունից զրկելու հարցում լուրջ խոչեր էին կատարելու եւ նրանց առջեւ բացվելու էր Սիրիային եւս Արեւմուտի հաղթական ծիրի մեջ ներքաշելու հեռանկարը եւ վերջապես կանխվելու էր Սիրիայի հետ Իսրայելի տարածաշրջանային նոր պատերազմով հղի հակամարտությունը:

Եթե այս ամենով հանդերձ, Իսրայելը ոչինչ չի խոստանում Սիրիային, ապա նա խնդիրը հաշտությունը չէ, ոչ էլ Գոլանի բարձունքները վերադարձնելը, այլ վերադարձնելու հարափոփոխ պատրաստակամությամբ Իրան-Սիրիա առանցքի չեզոքացման հարցը միջազգային հանրության օրակարգում ամրագրելը: Դրանով օրակարգում կամրագրվի նաեւ «Հզբոլլահի» մեկուսացումը, այդ ընթացքում Թուրքիայի միջնորդական առաքելությունը հակադարձ ազդեցություն կունենա: Այսինքն՝ Թուրքիան այդ առաքելությամբ տարածաշրջանում առանցքային դիրքեր գրավելու փոխարեն կարի հարաբերությունները ինչպես Սիրիայի, այնպես էլ Իրանի հետ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Բոբ Բարը պաշտոնապես առաջադրվեց ԱՄՆ նախագահության թեկնածու

Ազատության կուսակցությունը մայիսի 25-ին կայացած հանգամանում իր առաջնորդ Բոբ Բարին պաշտոնապես առաջադրել է ԱՄՆ նախագահության թեկնածու: Կուսակցության ներկայացուցիչները հանգամանքի ավարտից հետո հայտարարել են, որ Բարը նախագահության ամենաուժեղ թեկնածուներից մեկն է կուսակցության 37-ամյա պատմության մեջ:

Նախագահի պաշտոնի համար ծավալված պայքարի վերջնափուլում Բոբ Բարը հանդիպում կունենա հանրապետականների թեկնածու Ջոն Մակքեյնի եւ դեմոկրատների առաջադիմական թեկնածուի հետ, որը կլինի կամ Բարաք Օբաման, կամ էլ Հիլարի Քլինթոնը: Քաղաքագետների կարծիքը վկայակոչելով, Ֆրանսայրեսը նշում է, որ ներկա փուլում նախագահական ընտրարշավի մեջ մտնող Բարը կարող է խլել իր նախկին կուսակից Ջոն Մակքեյնի քվեների մի մասը:

Բոբ Բարը Հանրապետական կուսակցությունից դուրս է եկել երկու տարի առաջ: Քաղաքական ասպարեզում նա իրեն դրսեւորել է որպես անչափ պահպանողական գործիչ: Անցյալում նա մասնավորապես եղել է նախագահ Բիլ Քլինթոնի պաշտոնաթողության գործընթացը նախաձեռնողներից մեկը Մոնիկա Լեւինսկու սկանդալի ժամանակ:

Ազատության կուսակցության թեկնածուները կանոնավորապես մասնակցում են նախագահական ընտրարշավներին, բայց մինչեւ օրս նրանցից ոչ մեկին չի հաջողվել ընտրարշավներում գոնե երկրորդ տեղը զբաղեցնել:

ԹԵՐԹԻՐ

Էլի խաղաքաղաքական երկխոսություն՞ն. ժամանակ շահելու համար դեղատոմս

Այլընտրանքային խորհրդարան Վրաստանում

Վրացական ընդդիմությունը կստեղծի սեփական՝ այլընտրանքային խորհրդարանը: «Քանի որ մենք չունենք լեգիտիմ նախագահ, հիմա նաեւ խորհրդարան, կստեղծենք այլընտրանքային խորհրդարան, որը կկոչվի Ներկայացուցչական պալատ, իսկ մոտ օրերին էլ կլինի առաջին նիստը», «Նովոստի Գրուզիա» գործակալության տեղեկացմամբ, երեկ Թբիլիսիում տեղի ունեցած բազմահազարանոց ցույցում նման հայտարարություն է արել վրաց միացյալ ընդդիմության առաջնորդներից Զոնդի Բագաթուրիան:

Միացյալ ընդդիմության կողմից հունվարի 5-ի արահերթ նախագահական ընտրություններում թեկնածու առաջադրված Լեւան Գաչեչիլաձեն իր հերթին հայտարարել է, որ հավաքը ցրվելու է, որ կրկին հավաքվի հունիսի 10-ին, երբ տեղի կունենա նորընտիր խորհրդարանի առաջին նիստը: Ըստ որում, ըստ Գաչեչիլաձեի, ընդդիմությունը թույլ չի տա, որ այդ նիստը կայանա, «անգամ եթե դրա համար սպիտված լինեն ուժով մեզ նետել խորհրդարան»:

Իսկ մինչ այդ միացյալ ընդդիմությունը իր հավաքն էր անցկացնում Վրաստանի անկախության օրվա տոնակատարություններին զուգահեռ՝ երկրի նախագահից պահանջելով ընդունել խորհրդարանական ընտրությունների կեղծված լինելը: Ու չնայած երեկ օրվա առաջին կեսին ինչ-որ պահի տոնակատարության շառավղով նախատես տեղակայված հատուկ նեանակության ջոկատներն ու տեխնիկան կանգնեցնում էին անկախության օրվա առթիվ խորհրդարանի առջեւ շերթի ուղղությամբ գնացող ընդդիմադիրներին, այնուամենայնիվ, զինուժը հեռացվեց ողջ տեխնիկայի հետ:

Այս ամենին ի պատասխան երկրի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին հայտարարել է, թե ստեղծված իրավիճակից միակ ելքը երկխոսությունն է, որին վրացական ընդդիմությունը դեռեւս չի արձագանքել՝ Վրաստանի նախագահի հասցեին առայժմ միայն պահանջներ հնչեցնելով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱԿ-ը Աբխազիայում անօդաչու ինքնաթիռի ոչնչացման միջադեպը գնահատում է հրադադարի խախտում

Ռուսաստանի գործողությունները աբխազական հակամարտության գոտում հակասում են մոսկովյան համաձայնությանը եւ դիտարկվում որպես հրադադարի ռեժիմի խախտում: Մայիսի 20-ին վրացական անօդաչու ինքնաթիռի խփվելու առնչությամբ նման հայտարարություն է երեկ տարածել Վրաստանում ՄԱԿ-ի դիտարկման առաքելությունը, հիմնավորմամբ, որ անօդաչու հետախույզ ինքնաթիռը խփվել է ռուսական ինքնաթիռից: Հիմնավորումը տրամադրել են ՄԱԿ-ի համապատասխան փորձագետները:

ՄԱԿ-ի դիտարկման առաքելության հայտարարությամբ, մայիսի 20-ի միջադեպից անմիջապես հետո վրացական հետախույզ անօդաչու ինքնաթիռը ոչնչացրած ինքնաթիռը, ռադիոլոկացիոն կայանների տվյալների համաձայն, հեռացել է դեպի ռուսական օդային տարածք: Միեւնույն ժամանակ, նույն հայտարարության մեջ նշվում է, որ վրացական կողմից անօդաչու ինքնաթիռների թռիչքները հակամարտության գոտում եւս կարող են գնահատվել որպես մոսկովյան համաձայնագրի խախտում: Վրացական կողմի պնդումով՝ թե այդ թռիչքները անհրաժեշտ են եւ կատարվում են «վրացական տարածքների վրա», ՄԱԿ-ի դիտարկմամբ, այդ թռիչքներն աբխազական կողմն այլ կերպ է գնահատում, ուստի դրանք կարող են գնահատվել որպես համաձայնագրի խախտում:

Ա. Հ.

Լիբանանի նոր նախագահը Միշել Սլեյմանն է

Վեց ամիս առանց նախագահի մնալուց հետո Լիբանանն ի վերջո նախագահ ունի: Ինչպես եւ սպասվում էր, կիրակի օրը խորհրդարանը պետության նախագահ է ընտրել գեներալ Միշել Սլեյմանին, որի թեկնածությանը կողմ էին թե՛ իշխանությունները, թե՛ ընդդիմությունը:

Ֆրանսայրեսը նշում է, որ Արեւմուտքը եւ տարածաշրջանի երկրները մեծ կարեւորություն են տալիս Լիբանանի կայունությանը: Պատահական չէ, որ խորհրդարանի կիրակնօրյա նիստին ներկա են գտնվել Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի, Սաուդյան Արաբիայի, Սիրիայի, Իրանի արտգործնախարարները, Թուրքիայի վարչապետը, Քաթարի էմիրը, Արաբական լիգայի գլխավոր քարտուղարը:

Բանակի գլխավոր հրամանատար, 59-ամյա գեներալ Միշել Սլեյմանը նախագահ է ընտրվել՝ ստանալով խորհրդարանի պատգամավորների 127 քվեներից 118-ը: Նորընտիր նախագահը իր առաջին ելույթն ունեցել է խաղաղասիրական հագուստով: Նա լիբանանցիներին կոչ է արել վերջ դնել միջկուսակցական հակամարտություններին եւ ղեկավարվել երկրի ընդհանուր շահերով:

Սլեյմանի գլխավոր խնդիրն է երկրում պահպանել ուժերի հավասարակշռությունը եւ կառավարող սունիների արեւմտամետ կոալիցիայի ներկայացուցիչներին հաշտեցնել «Հզբոլլահ» շիա արմատական շարժման կողմնակիցների հետ: Հենց այդ երկու ուժերի դիմակայության պատճառով Լիբանանը ամբողջ 18 ամիս խաղաղական ճգնաժամի մեջ էր: 2007-ի նոյեմբերին նախկին նախագահ էմիլ Լահուդի պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո նոր նախագահի ընտրությունները այդ երկու ուժերի հակամարտության պատճառով 19 անգամ ձախողվել էին:

Սակայն անցյալ յոթեբաթթի հակամարտ կողմերը կարողացել էին համաձայնության գալ Քաթարի մայրաքաղաք Դոհայում, որտեղ ստորագրվեցին համապատասխան համաձայնագրեր: Դրանցով մասնավորապես նախատեսվում են փոփոխություններ ընտրական օրենսգրքում:

Միշել Սլեյմանը պետության նախագահի պաշտոնում ընտրվող 3-րդ գլխավոր հրամանատարն է: Լիբանանում ընդունված կարգի համաձայն, պետության ղեկավարի պաշտոնում պետք է ընտրվի մարոնիտ քրիստոնյա: Նույն համայնքից պետք է լինի նաեւ բանակի հրամանատարը:

Նախագահի ընտրությունը Լիբանանում կայունության վերահաստատման նոր հնարավորություններ է ստեղծում:

Մայիսի սկզբներին «Հզբոլլահի» հեռահաղորդակցական ցանցը փակելու կառավարության որոշումը սրել էր հակամարտությունը: Կառավարական զորքերի ու «Հզբոլլահի» կողմնակիցների մոտ 2 շաբաթ տեւած բախումների ընթացքում սպանվել էին 65 եւ վիրավորվել 200-ից ավելի մարդիկ:

Արժեքավոր մատենաշար՝ «Արցախյան գոյամարտի համահավաք»

«Շուշի» բարեգործական հիմնադրամի հրատարակությունը լույս ընծայեց **Բակուրի «Արցախյան գոյամարտի համահավաք»** մատենաշարի առաջին գիրքը: Գիտությունների ազգային ակադեմիայում օրերս գրի ընդհանրեսն էր, որը նախաձեռնել էին ՀՀ ԳԱԱ-ն, Հայաստանի Գրողների միությունը եւ «Շուշի» բարեգործական հիմնադրամը: Ընդհանրեսի բացման խոսքում ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանն ասաց. «Արցախյան պատերազմը դեռ չէր ավարտվել, Վլադիմիր Բարխուդարյանի հետ մեր գրական, հասարակական կյանքում, ասաց, որ մատենաշարը անփոխարինելի հուշ է ոչ միայն պատմության, այլեւ գեղարվեստական արձակ կամ ֆիլմերի սցենարներ ստեղծելու համար եւ հավելեց. «Շատ կարեւոր է մատենաշարի ընդհանրին՝ որպես Արցախյան ֆոնիկոն, թարգմանել եւ հասցնել միջազգային հանրությանը»: Այս մատենաշարը ստեղծելու գաղափարը, ըստ Բակուր Կարապետյանի, ծնունդ է առել 1988-ի փետրվարի 22-ին, երբ սեփականակերության հանրահավաքում նա որպես հեռուստամեկնաբան օրապորտաժ էր պատրաստում Ղարաբաղյան շարժման տարիներին Պետական անվտանգության կոմիտեի ոտքի տեղակալն էր: Առաջին անգամ հրապարակվող շատ փաստերով մասնակից-դրուցակիցների պատմություններում, որոնք հյուսվում են դեպքերով, դրվագներով, պատմական կարեւոր արժեք ունեցող մանրամասներով, երեւում է շարժումն ու պատերազմը իր բոլոր կողմերով, այդ թվում՝ երկրի ներսին եւ արտաքին հաղթականությամբ, դիվանագիտությամբ:

Ջեւի ընդհանրով, երեւի, գրքի հերոսներն իրենք էլ զարմանան, երբ մարդ է առաջանում, թե ինչպես՝ հաջողության հասան նրանք իրենց նպատակներում: Ազգարի չորս ծագերի ամենատարբեր երկրներում հայերի կարելի է հանդիպել այժմ: Բայց ինչպես՝ է նրանց մեջ դեռ արթուն մնացած հայկական եկեղեցու զանգերի ղողանջները:

Պատմական մեր հայրենիքում այդ զանգերը լուռ են: Բայց ինչպես են նրանք զրնգում մեր հոգիներում: Մենք դեռ «յան» վերջավորությունը կրում ենք մեր ազգանուններում, առիթից առիթ գուցե հաճախում ենք եկեղեցի: Բայց արդե՞ն դա բավարար է:

Ցանկանում եմ գնել այդ զանգակը: Խնդրել եմ ընկերոջս, որ կարգադրի այդ հարցը, հակառակ որ գիտակցում եմ տեղափոխության խնդիրը շատ ավելի թանկ է նստելու: Բայց ցանկանում եմ ձեռք բերել այդ զանգակը, որպեսզի հնչեցնեմ բարձրաձայն եւ մեր հայրենակիցներին դարձյալ հավատի վերադարձնելով՝ ավետել ափխարիին, որ մեզ բնաջնջել չի հաջողվել:

Կմիանա՞ն ինձ: Դրա համար գուցե ավելի բարձր գին պահանջվի, քան 650 դոլար:

Պատասխան եմ այդ զոհողության:

Ներսես Հ. Օ.

Վաճառվում է ... զանգակ

Հուզումով կարդացինք «Արմենյան միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի արդիկի 19-ի համարում վերոնշյալ վերնագրով Բելմոնտի (Մասաչուսետս) առաջին հայկական եկեղեցու հովիվ վերատաղվելի Գրեգորի Հարությունյանի հոդվածը եւ որոշցինք մեր ընթերցողներին ներկայացնել բովանդակության հակիրճ թարգմանությունը՝

Սամբուլից վերջերս վերադառնալով ընկերս պատմեց, թե ինչպես ինչ էր մնացել գներ հայկական եկեղեցու արձանագրություններով մի զանգակ, որն արժեր 650 դոլար, բավական բարձր գին՝ հուշանվերի համար:

Երեւույթը մտորումների տեղիք տվեց:

Մարդկանց աղոթարան, պատանումի կանչող, երեխաներին գուցե դպրոց հավաքող, Հիսուս Քրիստոսի ծնունդն ու հարություն առնելը ավետող զանգակը վաճառի էր հանվել Պոլսում՝ 650 կամ սակարկելու դեպքում մի փոքր պակաս գումարով: Իսկ իրականում ինչ արժեր այն: Չէ՞ որ ավելի էր, քան սոսկ զանգակ լինելը:

Հաշվի առնելով մեր ազգին բնաջնջելու մանրամասն ծրագրերն ու երիտասարդների գործադրած ջանքերը, հարց է առաջանում, թե ինչպես՝ հաջողության հասան նրանք իրենց նպատակներում: Ազգարի չորս ծագերի ամենատարբեր երկրներում հայերի կարելի է հանդիպել այժմ: Բայց ինչպես՝ է նրանց մեջ դեռ արթուն մնացած հայկական եկեղեցու զանգերի ղողանջները:

Պատմական մեր հայրենիքում այդ զանգերը լուռ են: Բայց ինչպես՝ են նրանք զրնգում մեր հոգիներում: Մենք դեռ «յան» վերջավորությունը կրում ենք մեր ազգանուններում, առիթից առիթ գուցե հաճախում ենք եկեղեցի: Բայց արդե՞ն դա բավարար է:

Ցանկանում եմ գնել այդ զանգակը: Խնդրել եմ ընկերոջս, որ կարգադրի այդ հարցը, հակառակ որ գիտակցում եմ տեղափոխության խնդիրը շատ ավելի թանկ է նստելու: Բայց ցանկանում եմ ձեռք բերել այդ զանգակը, որպեսզի հնչեցնեմ բարձրաձայն եւ մեր հայրենակիցներին դարձյալ հավատի վերադարձնելով՝ ավետել ափխարիին, որ մեզ բնաջնջել չի հաջողվել:

Կմիանա՞ն ինձ: Դրա համար գուցե ավելի բարձր գին պահանջվի, քան 650 դոլար:

Պատասխան եմ այդ զոհողության:

Ներսես Հ. Օ.

Սամսոֆոնի հնչյուններ դղյակում

Մայիսի 25-ին ամրոցներով հարուստ Արեւմտյան Մյունստերլանդի Գեմենի դղյակներից մեկում՝ Վասերբուրգում անցկացվող «Ամառամրոցներ-վիրտուոզներ-2008» համերգաշարը բացվեց սամսոֆոնահար Հայրապետ Առաքելյանի եւ Ջյունի «Սիմֆոնիեթեսայի» ելույթով: Հնչեցին Մոցարտի, Ալեխանդր Գլազունովի եւ այլ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Մամուլին տրամադրված այս տեղեկությունը ծանուցում է, որ 1991-ին Երեւանում ծնված 8 տարեկանից երաժշտությամբ զբաղվող Առաքելյանը ափխարիի բեմերում արդեն բավական փորձառություն է ձեռք բերել՝ ելույթ է ունեցել ԱՄՆ-ում, Կանադայում, Մերձավոր Արեւելքում, եվրոպական բազմաթիվ քաղաքներում: Վարպետության դասեր է սացել պրոֆ. Դանիել Գորիեից եւ Թեոդորոս Կերկեցոսից: Մասնակցել է միջազգային մրցույթների ու փառատոնների: 2005-ից ուսանում է Ջյունի երաժշտության բարձրագույն դպրոցում:

Գերմանական էլեկտրոնային լրատուներից մեկի բնորոշմամբ՝ «բացառիկ տաղանդի» հմտություն ունեցող հայրապետը Գլազունովի սամսոֆոնի համար գրված կոնցերտը մայիսի 18-ին ունկնդիրների դատին է ներկայացրել մեկ ուրիշ հասցեում՝ Հերթենի ամրոցում:

Հիշեցնենք, որ հայրապետը երեւանում մաս է կազմում «Նոր անուններ» խմբին:

ԼՈՒՍԻՆԵ ՏԻՄԱՆՈՎԱ
Գերմանիա

Խաչքար՝ Մետրոպոլիտեն թանգարանում

Մոտ հազար կգ ծանրությամբ եւ 2,5 մետր բարձրությամբ 13-րդ դարի բազալտե, Լոռիում պատրաստված գեղեցիկ մի խաչքար ներկայիս ցուցադրվում է Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանի բյուզանդական արվեստի բաժնի «Մերի եւ Մայլզ Տահարիս» դահլիճում, տեղեկացնում է «Արմենյան միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Խաչքարը թանգարանին է տրամադրել Երեւանի պատմության պետական թանգարանը: Ըստ հաղորդագրության, սա առաջին դեպքն է, որ Մ. Նահանգների որեւէ թանգարանում խաչքար է ցուցադրվում:

Տեղափոխման հարցերում օժանդակել է Հակոբ Գետոգրանի անվան հիմնադրամը (ԱՄՆ), իսկ տեղադրման ափխաանմները վերահսկել է թանգարանի այդ բաժնի համակարգող Հելեն Էվանսը, ում իր երախտագիտությունն է հայտնել ծրագիրը իրականացնողներին:

Աշնանը նախատեսվում է հայկական արվեստի այլ ցուցանմուշներ եւս տեղադրել խաչքարի կողքին եւ նոյեմբերի 23-ին կազմակերպել «Կիրակին Մետրոպոլիտենում» հատուկ միջոցառում, որի ընթացքում կկարդացվի դասախոսություն հայկական միջնադարյան արվեստի մասին եւ կհնչի հայկական միջնադարյան երաժշտություն:

Հ. Օ.

Մշակույթի զարգացման գերակայություններ

Երեկ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը լրագրողներին ներկայացրեց կառավարության մշակած մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակայությունները: Նա նշեց, որ կազմվել է 2008-2013 թթ. համար միջոցառումների ցանկն ըստ գերակայությունների, որոնք խմբավորվել են հիմնականում երեք գերակայությունների միջեւ: Դրանք են՝ մշակույթի դաշտի համալիր զարգացումը, մշակութային ժառանգության պահպանությունը, արվեստի եւ մշակութային ժամանակակից ենթակառույցների զարգացումը եւ գործընթացների խթանումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մշակույթի ոլորտում, ոլորտի կադրային հաղթականությունը եւ մշակութային կրթությունը, միջազգային համագործակցության զարգացումը, տեղեկատվական հաղթականության իրականացումը: Նախարարը տեղեկացրեց, որ

երեք տարվա ընթացքում մարզերում կստեղծվեն 30 հեռակեցային դպրոցներ՝ հագեցած բոլոր նյութատեխնիկական եւ դիդակտիկ նյութերով, մեթոդական կենտրոններով:

Մշակութային ժառանգության պահպանմանն անդրադառնալով, Հասմիկ Պողոսյանը տեղեկացրեց, որ ափխարիի բոլոր հայկական մշակութային օջախները, եկեղեցիները մոնիտորինգի արդյունքում կհամաստեղվեն մեկ ինֆորմացիոն տեղեկատվական բանկում ու նրանց պահպանման, վերականգնման եւ վերանորոգման ափխաանմներ կիրականացվեն:

Բոլոր ոլորտներում անց են կացվելու մոնիտորինգներ, պարզելու թե ինչ է արվել, ինչն է ընդունելի եւ ինչ խնդիրներ կան, որոնք լուծման կարիք ունեն:

Նախարարը տեղեկացրեց, որ մեկ ամսից նախարարությունում մրցույթ կհայտարարվի եւ մշակույթի ոլորտի այն անձին, ովքեր կցանկանան մասնակցել նախարարության զարգացման ծրագրերին, կարող են դիմել:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐՏԱՐՅԱՆ

Առաջադրանքը չկատարվեց

Մտածված ու գեղեցիկ խաղի էլ ակնասեռ չեղավ

Մինչեւ 19 տարեկանների Հայաստանի ոչսահմանական հավաքականին սեփական ոչսերն էլ չօգնեցին Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճել: Հայաստանում անցկացվող էլիտար փուլի մրցաշարի երկրորդ տուրում մեր ֆուտբոլիստներն Աբովյանում հյուրընկալել էին Ուկրաինայի իրենց հասակակիցներին: Առաջին խաղում 1-2 հաշվով զիջելով թուրերին, հայ ֆուտբոլիստներին ուկրաինացիներն հեռ մրցավարում միայն հաղթանակ էր անհրաժեշտ: Սակայն ինչպես առաջին խաղում, այնպես էլ երկրորդում մեր հավաքականը չկարողացավ իրեն դրսեւորել ու կրկին խաղադաշտից հեռացավ պարտված: Այս անգամ էլ մեր ֆուտբոլիստների խաղում բացակայում էր հաստակությունը, կազմակերպված եւ խելացի գոհներ կազմակերպելու ունակությունը: Հայ ֆուտբոլիստները գործում էին հախուռն, հաճախակի չարաշահում էին անհասկանալի խաղը, որի պատճառով այդպես էլ չկարողացան լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Միակ հիշարժան պահը թերեւս Լեւոն Հայրապետյանի շեշտակի հարվածն էր, որը հեռ մոտեցավ ուկրաինացիների դարպասապահը:

Հյուրերն իրենց գրագետ խաղով, տակտիկական մտահղացումներով գերազանցեցին հայ ֆուտբոլիստներին: Ուկրաինացիների կազմում հաստկաթեւ ակտիվ էր եւ այլի ընկավ Կիեւի «Դինամոյի» երիտասարդ հարձակվող Արյոմ Կրավեցը, որին վնասազերծել մեր ֆուտբոլիստներն այդպես էլ չկարողացան: 23-րդ րոպեին հենց նրա աջ թեւով սղընթաց գոհից հետո էլ բացվեց հաշիվը: Նրան ընդառաջ դուրս եկած Գետոզ Պուգայանը հեռ մոտեց գնդակը, որը դիպչելով մեր պաշտպանի ոտին՝ հայտնվեց դարպասում: Կրավեցը եւս երկու անգամ կարող էր գրավել հայ ֆուտբոլիստների դարպասը, սակայն նոյասավոր դիրքերից վրիպեց:

Այսպիսով, պարտվելով 0-1 հաշվով, ՀՀ հավաքականը վերջին տուրից առաջ զրկվեց ուղեգիր համար պայքարելու հնարավորությունից: Ինչպես հայտնի է, ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը հավաքականի առջեւ խնդիր էր դրել մտնելու եզրափակիչ փուլ: Առաջադրանքը չկատարվեց: Նման խաղով, իհարկ, խնդիրն անհնար էր լուծել: Հեռահրոական է, որ հավաքականի գլխավոր մարզիչ Արմեն Գրիգորյանցը մինչ մրցաշարի մեկնարկը խուսափում էր առաջին տեղը գրավելու հնարավորության մասին կոնկրետ պատասխանից, այլ հիմնականում նշում էր, որ կաշխատեն գեղեցիկ խաղ ցուցադրել եւ ուրախացնել հայ երկրպագուներին: Ցավոտ ոչ արդյունք կա, ոչ էլ գեղեցիկ ու առավել եւս մտածված խաղ: Մեր ֆուտբոլիստներն ակնհայտորեն զիջում են մրցակիցներին:

Այսօր կկայանա վերջին տուրը: ՀՀ հավաքականը Աբովյանում ժամը 15-ին կմրցի Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի ընտրանու հետ, որը 2-րդ խաղում 3-0 հաշվով պարտության մատնելով թուրերին, 6 միավորով սանձնել է առաջատարի դերը: Նույնիսկ ոչ-ոքի արդյունքը հայերի հեռ իսպանացիներին ուղեգիր կպարգեւի: Թուրերն ու ուկրաինացիները կմրցեն «Միկայի» մարզադաշտում: Նրանք վաստակել են 3-ական միավոր:

Երկար մազերը չխոչընդոտեցին հաղթանակին

Առաջին կիսամրջին հաշում IBO-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ռիկի Հատոնը հաջողությամբ պաշտպանեց ուժեղագույնի տիտղոսը: Մանչեսթրի «Սիթի օֆ Մանչեսթր» մարզադաշտում, 55 հազար հանդիսականների ներկայությամբ 29-ամյա բրիտանացի բոքսիչը միավորներով հաղթեց 33-ամյա մեքսիկացի Խուան Լազկանոյին:

Բոլոր երեք մրցավարներն էլ հաղթանակը շնորհեցին Ռիկի Հատոնին, թեեւ մեքսիկացին 8-րդ եւ 9-րդ ռաունդներում հնարավորություն ուներ մրցակցին նոկդաունի ենթարկելու: «Մենամարտում հաղթելն այնքան էլ հեշտ չէր: Դեռ երբեմ այսքան չէի նյարդայնացել», մենամարտից հետո հայտարարել է Ռիկի Հատոնը: Այդ հանդիպմանը ներկա էր նաեւ Մայք Թայսոնը:

Նույն երեկոյի ընթացքում կայացած մյուս մենամարտում, որում մրցում էին IBF-ի վարկածով 63,5 կգ քաշային կարգում աշխարհի չեմպիոն, ամերիկացի Փոլ Մալինյագին ու կամերունցի Լավմոր Ն'Դուն, հեսահրոական դեմք տեղի ունեցավ: 27-ամյա ամերիկացին ռինգ էր դուրս եկել երկար մազերով, որոնք «պոչ» էր կապել: Սակայն առաջին իսկ ռաունդում մրցակցի հուժկու հարվածից հետո «պոչը» ճանդվեց եւ մազերը սկսեցին լրջորեն խանգարել մենամարտելուն: Ընդմիջմանը բոքսիչարարիկի մարտավարները սեղմված էին միջոցներ ձեռք առնել «պոչն» ամրացնելու համար, սակայն այն դիմացավ մինչեւ 8-րդ ռաունդը: Տեղի տվեցին նաեւ մրցավարի նյարդերը, որը եւս միացավ մարտավարներին: Իսկ հաջորդ ընդմիջմանն արդեն մարտավարները պարզապես վերցրեցին մկրատն ու կտրեցին խանգարող մազերը: Ճիշտ է, այս ամենը չազդեց արդյունքի վրա: Մրցավարները հաղթանակը շնորհեցին ամերիկացի բոքսիչարարիկին:

Հեմիլտոնը կրկին առաջատարն է

Լյուիս Հեմիլտոնը դարձավ «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի 6-րդ փուլի հաղթող, որն անցկացվեց Մոնակոյում: «Մակլարենի» բրիտանացի ավտոմրցարշավորդը բոլորից արագ հաղթահարեց ողջ մրցաշրջանը եւ ընդհանուր հաշվարկով վերադարձրեց առաջատարի դիրքը: Նա վաստակել է 38 միավոր եւ 3 միավորով առաջ է անցել «Ֆերարիի» ներկայացուցիչ Կիմի Ռայկոնենից: Վերջինս Մոնակոյում վերջնագիծը հասել է 9-րդը: Իսկ Հեմիլտոնից հետո լավագույն արդյունքը ցույց տվեցին 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրած Ռոբերտ Կուբիցան ու Ֆելիպե Մասան: Վերջինս ընդհանուր հաշվարկով 34 միավորով 3-րդ հորիզոնականում է: Նրան 2 միավորով է զիջում Կուբիցան:

Թեեւ Հեմիլտոնի հաղթանակին, «Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում առաջատարի դիրքերը պահպանեց «Ֆերարին», որի հաշվին գրանցված է 69 միավոր: 2-րդ տեղում 53 միավորով «Մակլարենն» է:

Նալբանդյանը սկսեց հաղթանակով

Արգենտինահայ բենիսիոս Դավիթ Նալբանդյանը հաղթանակով մեկնարկեց թենիսի Ֆրանսիայի բաց առաջնությունում: Առաջին փուլում նա պարտության մատնեց իր հայրենակից Կառլոս Բեռլոկին (6-2, 6-4, 6-1): Հաջորդ փուլ են մտել նաեւ Ռոջեր Ֆեդերերը, Մերեմի Շարդին, Գիլերմո Լոպեսը, Խոսե Ակասուսոն:

Միլախը զրկվեց օլիմպիական ուղեգրից

Ուկրաինացի ծանրաբեռնային բոքսիչարարիկ Իսմայիլ Սիլախի դրական սեռագումը դրական արդյունք է տվել: Սիլախը մարտին Իսլանդիայում կայացած վարկանիշային մրցաշարում օլիմպիական ուղեգիր էր նվաճել, որից հետո դրական սեռագման էր ենթարկվել:

23-ամյա բոքսիչարարիկը կորակազրկվի, իսկ նրա օլիմպիական ուղեգիրը չեղյալ կհամարվի: Քանի որ բոքսիչարարիկների ուղեգրերն անվանական չեղյալ կհամարվի: Քանի որ բոքսիչարարիկների ուղեգրերն անվանական չեղյալ կհամարվի: Ինչպես հայտնի է, ՀՖԲ նախագահ Ռուբեն Հայրապետյանը հավաքականի առջեւ խնդիր էր դրել մտնելու եզրափակիչ փուլ: Առաջադրանքը չկատարվեց: Նման խաղով, իհարկ, խնդիրն անհնար էր լուծել: Հեսահրոական է, որ հավաքականի գլխավոր մարզիչ Արմեն Գրիգորյանցը մինչ մրցաշարի մեկնարկը խուսափում էր առաջին տեղը գրավելու հնարավորության մասին կոնկրետ պատասխանից, այլ հիմնականում նշում էր, որ կաշխատեն գեղեցիկ խաղ ցուցադրել եւ ուրախացնել հայ երկրպագուներին: Ցավոտ ոչ արդյունք կա, ոչ էլ գեղեցիկ ու առավել եւս մտածված խաղ: Մեր ֆուտբոլիստներն ակնհայտորեն զիջում են մրցակիցներին:

Այսօր կկայանա վերջին տուրը: ՀՀ հավաքականը Աբովյանում ժամը 15-ին կմրցի Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի ընտրանու հետ, որը 2-րդ խաղում 3-0 հաշվով պարտության մատնելով թուրերին, 6 միավորով սանձնել է առաջատարի դերը: Նույնիսկ ոչ-ոքի արդյունքը հայերի հեռ իսպանացիներին ուղեգիր կպարգեւի: Թուրերն ու ուկրաինացիները կմրցեն «Միկայի» մարզադաշտում: Նրանք վաստակել են 3-ական միավոր:

Գրանտը պաշտոնանկ արվեց

Ռոման Աբրամովիչն, այնուամենայնիվ, պաշտոնանկ արեց «Չելսիի» գլխավոր մարզիչ Ավրամ Գրանտին: Պատճառը պարզ է. «Չելսիին» չհաջողվեց արժանանալ Անգլիայի չեմպիոնի տիտղոսին ու նվաճել չեմպիոնների գավաթը:

Ինչպես հայտնի է, փոխարինելով Ժոզե Մոուրինյոին, Գրանտն առանձնակի ազդակցություն չէր սանում թիմի երկրպագուներից, թեեւ «Չելսին» մինչեւ վերջ պայքարեց չեմպիոնության համար եւ իր պատմության մեջ առաջին անգամ մտավ չեմպիոնների լիգայի եզրափակիչ:

Ակումբի պաշտոնական կայքէջում ղեկավարության կողմից շնորհակալություն է հայտնվում Գրանտին կատարած աշխատանքի համար: Առայժմ պարզ չէ, թե ով կստանձնի «Չելսիի» գլխավոր մարզչի թափուր պաշտոնը: Թեկնածուների թվում նշվում են «Բարսելոնից» վերջերս հեռացած Ֆրանկ Ռայկարդի եւ ՌԴ հավաքականի գլխավոր մարզիչ Գուս Հիդինգի ազգանունները: Ինչպես հայտնի է, Հիդինգն առայժմ նոր պայմանագիր չի կնքել ՌԴ հավաքականի հետ, այնպես որ բացառված չէ «Չելսին» գլխավորելու հնարավորությունը:

«Ռոման» Իտալիայի գավաթակիր

Իտալիայի գավաթի եզրափակիչ մրցախաղով երկրում ավարտվեց ֆուտբոլային մրցաշրջանը: Վճռորոշ խաղում պայքարվեց մրցանակը վիճարկեցին երկրի չեմպիոն «Ինտերն» ու արծաթե մրցանակակիր «Ռոման»:

Վերջին երկու տարիներին հենց այս թիմերի միջեւ են բաշխվում իտալական ֆուտբոլի գլխավոր մրցանակները: Ընթացիկ առաջնությունում «Ռոմային» չէր հաջողվել հաղթել «Ինտերին»: Փոխարենը «Ռոմայի» ֆուտբոլիստները հաջողության հասան գավաթի եզրափակիչում: Հաշիվը 35-րդ րոպեին բացեց «Ռոմայի» ֆուտբոլիստ Մեկսեսը, իսկ ընդմիջումից հետո անց Պերոտան 2-րդ գոլը խփեց: «Ինտերին» միայն խաղավերջում հաջողվեց կրճատել հաշվի տարբերությունը: Այսի ընկավ Պելեն: Գավաթը «Ռոմայի» ավագ Ֆրանչեսկո Տոտիին հանձնեց Իտալիայի նախագահ Ջորջիո Նապոլիտանոն, թեեւ Տոտին վնասվածքի պատճառով խաղին չէր մասնակցում:

Ըստ իտալական լրատվամիջոցների, այդ խաղը վերջինն էր «Ռոմայի» նախագահ Ֆրանկո Սենսիի օրոք: Հայտնի է դարձել, որ ամերիկացի միլիարդատեր Ջորջ Սորոսը համաձայնության է եկել ակումբը գնելու հարցի շուրջը: Այդ դեպքում, իհարկ, ակումբի ղեկավար կազմում հնարավոր են փոփոխություններ:

«Լիոնի» երկրորդ տիտղոսը

Ֆրանսիայի չեմպիոն «Լիոնը» ընթացիկ մրցաշրջանում իր երկրորդ տիտղոսն արժանացավ՝ նվաճելով նաեւ երկրի գավաթը: Եզրափակիչ խաղում «Լիոնը» ուժերը չափեց ՊՍԺ-ի հետ: Հաղթողը որոշվեց լրացուցիչ ժամանակում: 102-րդ րոպեին Գովուի խփած միակ գնդակը հաղթանակ պարգեւեց «Լիոնի» ֆուտբոլիստներին: «Լիոնը» 4-րդ անգամ դարձավ Ֆրանսիայի գավաթակիր: Վերջին անգամ նա պայքարեր մրցանակը նվաճել էր 1973-ին:

Մոնտգոմերին բանտարկվեց

Ամերիկացի նախկին առագավազորդ Թիմ Մոնտգոմերին բանկային անդորրագրերի կեղծման մեղադրանքով դատապարտվել է 46 ամսյա բանտարկության: Հիշեցնենք, որ նման պատժամիջոցի էր ենթարկվել նաեւ նրա նախկին ընկերուհի, եւ հանրահայտ թենիսուհի Մերիոն Ջոնսը:

Մոնտգոմերին հերոինի թաքցման եւ վիրջինիա նահանգում այն տարածելու մտադրության համար վաղուց ԱՄՆ-ի ոստիկանության հսկողության տակ էր: 2005-ին 100 մ վազքում աշխարհի նախկին ռեկորդակիրը արգելված խթանիչների օգտագործման համար որակազրկվել էր: Իսկ անցյալ տարի նրան մեղադրեցին բանկային կեղծ անդորրագրերի միջոցով 775 հազար դոլար գումար յուրացնելու փորձ կատարելու համար: Դատախազության կատարած հետաքննությամբ հայտնաբերվել էին 5 մլն դոլարի կեղծ բանկային անդորրագրեր:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Նոր հուշադրամ «Առյուծ»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Կենդանակերտի նշաններ» միջազգային դրամագիտական շարքի շրջանակներում թողարկել է առյուծ պատկերող արծաթե հուշադրամ: Շարքում ներառված են կենդանակերտի տասներկու նշանները:

Հուշադրամի դիմերեսի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, որից ներքև շրջանագծով հայերեն եւ անգլերեն անվանական արժեքի մակագրությունն է՝ «DRAM 100 ԴՐԱՄ»: Զինանշանից վերեւ նշված է թողարկման տարեթիվը՝ «2008»: Ամբողջը եզերված է գնավոր շրջանագծով: Նշված շրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ առկա է երկրորդ գնավոր շրջանագիծը: Երկու շրջանագծերի միջեւ դաշտը բաժանված է տասներկու հավասար մասերի, որոնցում պատկերված են կենդանակերտի նշանների խորհրդանիշերը: Եզրաշուրթի մոտ վերեւում՝ հայերեն, իսկ ներքեւում անգլերեն շրջանագծով մակագրված է համապատասխանաբար՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» եւ «REPUBLIC OF ARMENIA»:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում աստղային երկնի ֆոնի վրա առյուծի պատկերն է: Պատկերից վերեւ առկա է դեղին գույնի ցիրկոնով ձեւավորված աստղ: Ներքեւի աջ մասում պատկերված է առյուծի կենդանակերտի նշանի խորհրդանիշը: Ամբողջը եզերված է գնավոր շրջանագծով: Շրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ վերեւում լատիներեն, իսկ ներքեւում ռուսերեն նշված է համաստեղության անվանումը համապատասխանաբար՝ «LEO» եւ «ЛЕВ»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Դարձերեսի դաշտի ձեւավորման համար օգտագործվել են գունավոր ներկեր: Հուշադրամի ուղղագծերի հեղինակն է Ու. Վալեժակը: Հուշադրամը դրվագվել է Լեհաստանի դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը.

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը եւ հարգը	արծաթ, 925 0
Ընդհանուր զանգվածը	28,28 գ
Տրամագիծը	38,61 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Տրաժանակը	12000 հատ

ԿԲ մամուլի ծառայություն

Դեպքերված 4

Ստիպած ձեռնարկատիրոջ, նուազագոյն պատասխանատու սոցիալական ապահովագրության վճարի տարեկան եկամուտների մասին

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Բաժին I

1. Պետական գրանցման համարը	29006726
2. Պետական գրանցման ամսաթիվը (օր, ամիս, տարի)	02.04.2007
3. Հարկ վճարողի հաշվառման համարը (ԿԱՀԿ)	32479667
4. Հաշվետու տարի	2007
6. Սոցիալական հարկի համարը	3309750175
7. Մարզ, ազգաբնակ. հայտնուն	Արարատ Մասիսյան
8. Ստանալու բնակության հասցեն	Նորագյուղ, տուն 10
10. Տան հեռախոսի համարը	569008
11. Աշխատանքային հեռ. համարը	556042
12. Գործունեության վայրի հասցեն	Տիգրան Մեծի 52, բն. 2
13. Վկայական համարը	ԱԱ106691
14. Մեծնագի սերիան	AC
15. Մեծնագի համարը	0493829
16. Տոյան	008
17. Գործունեության դադար	գործառում
18. Ծննդյան օր, ամիս, տարի	23.09.1975

Բաժին II. Գործունեությունից ստացված եկամուտներ

Գործունեությունից ստացված եկամուտները	(21)	173000
Եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսերը	(22)	272000
Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտը	(23)	(99000)
Բաժին III Պարտադիր սոցիալական ապահովագրության գումարի վճարման ենթակա սոցիալական վճարի հաշվարկ		
Հաշվետու տարվա սոցիալական վճարի ենթակա գումարը	(26)	45000
Հաշվետու տարվա վճարման ենթակա սոցիալական վճարի գումարը	(27)	45000

Դեպքերված 6

Բաժին IV Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ

Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ	(40)	173000
Ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսեր		
արտադրանքային վճարներ	(44)	60000
աշխատանքային հարաբերություններով հարկեր, տուրքեր եւ այլ պարտադիր վճարներ	(45)	45000
այլ ծախսեր	(46)	167000
Ընդամենը ծախսեր	(57)	272000
Ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունք	(59)	(99000)

ՍՈՒՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից իրականացվել է անհատ ձեռնարկատեր Սուքիաս Մակարյանի 2007-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ֆիզիկական անձի տարեկան եկամուտների հայտարարագիր» ստորագրված: Նշված հայտարարագիրը համար պատասխանատվությունն է կրում անհատ ձեռնարկատերը:

Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք «Ֆիզիկական անձի տարեկան եկամուտների հայտարարագիր» վերաբերյալ:

Աուդիտը պլանավորվել եւ իրականացվել է այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ, որ հայտարարագիրը չի պարունակում էական թերություններ:

Աուդիտը իր մեջ ընդգրկում է ընտրանքային եղանակով իրականացված այն վերաբերումները ուսումնասիրությունը, որոնք հանդես են հայտարարագրում արտացոլված գումարները եւ հաշվետվությունները:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրակացության համար: Մեր կարծիքով անհատ ձեռնարկատեր Սուքիաս Մակարյանի «Ֆիզիկական անձի տարեկան եկամուտների հայտարարագիրը» ներկա է 2007-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի ճշմարիտ եւ իրական պատկերը:

Մենք աուդիտոր
Վկայական 01 Ա 088712
Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱՕ թիվ 034, տրված 14.01.2005 թ.,
Երեւան 10 մայիսի 2008 թ.

Վարուժան Սուքիասյան

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 26.05.2008 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	307.96
EUR	1	ԵՎՐՈ	484.82
RUR	1	Ռուս. ռուբլի	13.08
GEL	1	Վրաց. լարի	211.80

«ՄԵԿ ԱԶԳ ՄԵԿ ՄՇԱԿՈՒՅԹ» ՓԱՌԱՏՈՆԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ (ԼՈԳՈ) ՍՏԵՂԾՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

ՀՅ մշակույթի նախարարությունը եւ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամը հայտարարում են «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային փառատոնի խորհրդանշանի (լոգո) ստեղծման մրցույթ: Անհրաժեշտ պայման է, որ խորհրդանշանը արտահայտի անկախության, միասնության գաղափարը եւ, որ մշակութային տարրերից բացի օգտագործված լինեն մեր պետական խորհրդանիշը՝ եռագույն դրոշի գույները:

Սահմանվում է 3 մրցանակ՝ 450,000 դրամ ընդհանուր գումարով:

Հայտերը ներկայացնել մինչեւ հունիսի 16-ը ՀՅ մշակույթի նախարարություն: Տեղեկությունների համար զանգահարել 56-45-46:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՆԿԱՐԻ ՀԱՐՏՄԱՆ ՄՍՈՒԹ

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈՈԱԿ-ը (պատվիրատու) «ՊՄԱՍ ՊՄՊ ԳՀԿՊԾԲ-08/04» ծածկագրով հայտարարում է գնանշման հարցում **«Ազարբնց» պատմամշակութային արգելոց-թանգարանում թանգարանային ցուցադրության կահույքի պատրաստման աշխատանքներն իրականացնելու համար:** Հրավեր տանելու համար անհրաժեշտ է 500 ՀՀ դրամ փոխանցել «Հայէկոնոմբանկի» «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈՈԱԿ-ի N 16300814032 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրատարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Թախտով 15, հեռ.՝ 58-74 25, Վ. Իսահակյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում նաեւ անձի լիազորությունները հաստատող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրատարակման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հրավիրում ենք Ձեզ այցելելու ցուցահանդես-տոնավաճառ

ՄԱՆԿՈՒՅՑ ԱՇԽԱՐՀ

EXPO 2008

Մայիսի 30-ից Հունիսի 1

Արգիշտի փ., 7
Երեւանում
«Մոսկվայի տուն»
մշակութագործարարական
կենտրոն

Կազմակերպիչ
LOGOS EXPO Center
ՀՀ, 0033 Երեւան, Հ. Հակոբյանի փ. 3
Հեռ.: +374 10 23 5775, 26 5635
Ֆաքս: +374 10 27 1330
E-mail: expo@expo.am
URL: www.expo.am

«Լենի Տուր» պատմամշակութային տուրիստական գործակալությունը կազմակերպում է 7-ից 10-օրյա բարձրակարգ շրջագայություններ դեպի պատմական հարաւոան՝ նվիրված ածխիդրատային մեծամասն գրող վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին:

Շրջագայության ծանոթագրերը բացի մեծ գրողի ծննդավայր Բիթլիսից, կայցելեն նաեւ Կարս, Անի, Իգդիր, Բաքու, Վան, Մուշ, Խնուս, Երզրում, Պրպահան քաղաքները:

Օգտվեք Ձեզ ընձեռված եզակի հնարավորություններից եւ ծանոթացեք դարձեք մեր այս հիշարժան ուխտագնացությունները:

Մանրամասների համար կարող եք այցելել մեզ հետեւյալ հասցեով՝
Երեւան,
Բաղրամյան 28, սենյակ 29
Հեռ. (091) 203 206,
(094) 203 206:

ԱԼԻ ՏՈՒՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների գործարարներին եւ կազմակերպություններին

Սլովակիայի առեւտրային բանկերը Հայաստանի եւ Արցախի գործարարներին եւ կազմակերպություններին տրամադրում են բիզնես վարկեր՝ ՀՅ-ում եւ ԼՂՀ-ում գործող տոկոսադրույքներից էապես ցածր տոկոսներով:

Վարկի մարումը սկսվում է ձեւակերպումից մեկ տարի անց: Մարման ժամկետը մինչեւ հինգ տարի:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել 54-89-36, կամ (094)366-989 հեռախոսահամարներով:

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

2 կից բնակարաններ Սայաթ-Նովա 3 շենքի առաջին հարկում՝ օդեռայի հարեւանությամբ: Ընդհանուր մակերեսը 150 մ. է, առասպաղի բարձրությունը 4.50մ է: Հարմար է օգտագործել որպես օֆիսային տարածք, ռեստորան կամ խանութ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել (094)36-69-89 հեռախոսահամարով:

Լուսանկարները գործունեության իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայական՝ համար՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Հրատարակման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Անանիան: Տպաքանակ՝ 3000, սերտագրած է տպագրության՝ 26.05.2008, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2: